

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ



«ՂԱՐԱԲԱՂԸ» ՖՈՒՏԲՈՒԼԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՏԵՐՈՒՄ



Ստեփանակերտ - 2007



- Ամենաուժեղ պաշտպանությունը դա՛հարձակվելն է:

- Ավելի լավ է մեկ ոտքով գերազանց հարվածել իմանալ, քան երկու ոտքով՝ միջակ:

- Յույց տվեք թիմի կիսապաշտպաններին եւ ես կասեմ ինչպիսի թիմ ունեք դուք:

- Միայն տաղանդը եւ քրտնաջան աշխատանքն է ճանապարհ բացում դեպի ֆուտբոլի բարձունքները:

- Հարգիր եւ սովորրիր մեծերից, որպեսզի դու էլ հարգվես ու մեծարվես:

« ՂԱՐԱԲԱՂԸ »
ՖՈՒՏԲՈՒԼԻ
ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՄ

ՀՏԳ 796.332
ԳՄԳ 75.578
Պ 505

Պետրոսյան Ռազմիկ
Պ 505 «Ղարաբաղը» ֆուտբոլի բարձունքներում. -
Ստեփանակերտ: Դիզակ պլյուս, 2007. - 80 էջ

Այս գիրքը նվիրված է բոլոր այն ֆուտբոլիստներին, որոնք գոնե մեկ անգամ մտել են խաղադաշտ եւ բարձր պահել «Ղարաբաղ-Արցախ» ֆուտբոլային թիմի պատիվը:
Գրքում տեղադրված է 1967-1990թթ. բոլոր ֆուտբոլիստների անունները, որոնք հանդես են եկել «Ղարաբաղ» եւ «Արցախ» ֆուտբոլային թիմերում: Բացի դրանից գրքում ներկայացված են այն թիմերը եւ հավաքականները, որոնք հանդես են եկել Ստեփանակերտում եւ մրցակցել «Ղարաբաղ» թիմի հետ:

ԳՄԳ 75.578

ISBN 978-9939-800-12-7

Ռ. Պետրոսյան, 2007թ.

Այս փոքրիկ գրքում ես նպատակ չեմ ունեցել գրելու Ղարաբաղի մարզական պատմությունը: Դա պահանջում է երկար տարիների քրտնաջան աշխատանք և հետևողական վերլուծություն: Իմ նպատակն էր պատմության փոշու տակից դուրս հանել քառասնամյա իմ մարզչական աշխատանքը, որովհետև դրանք սուկ մարզչական տարիներ չէին: Այդ ժամանակահատվածում ես աշխատել եմ հիանալի, տաղանդավոր մարդկանց, պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների հետ:

Այս համեստ գրքուկում ես փորձել եմ մոռացությունից փրկել էրեսուն տարի առաջ իրենց մարզական Օլիմպը ապրող այն ֆուտբոլիստներին, ովքեր դիմանալով ամանատարբեր փորձություններին ու դժվարություններին, դարձել են Ադրբեյջանի 1977 թվականի չեմպիոն: Ես շատ ֆուտբոլիստների հետ եմ խաղացել Ղարաբաղում, սկսած Թեմիկ Արզումանյանից, Գրիշկայից, Բադալից, Սուրիկից, Կառլոսից, Ռուդիկից, Ալբերտից, Էռնեստից մինչև Էդիկը, Բենիսմին Բաբայանը, Միքայելը, Կառլենը, Լեոնիդը, Գագիկը, Սաքոն, Վանյան, Գրիգորին և ուրիշներ: Նրանք բոլորն էլ տաղանդավոր ֆուտբոլիստներ էին և կարող էին հաջողությամբ խաղալ ցանկացած վարպետ թիմի կազմում: Իսկ 1977 թվականին այդ ֆուտբոլիստները բոլորին գերազանցում էին իրենց թե՛ վարպետությամբ, և թե՛ ֆիզիկական-կամային հատկանիշներով և պատրաստ էին գրավել այն բարձունքները, որը դրված էր նրանց առջև:

Իմ նպատակն է մարզասերներին, հատկապես երիտասարդույց տալ, թե «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմն ինչպիսի թիմերի հետ է խաղացել և ինչպիսի ֆուտբոլիստներ են հանդես եկել մեր թիմում 1967-ից մինչև 1990 թվականը: Եթե որևիցե մեկը ցանկանա գրել Արցախի տարբեր տարիների ֆուտբոլի պատմությունը, ես մեծ սիրով կտրամադրեմ այդ տարիների «Ղարաբաղ» թիմի կազմը և այն թիմերի անունները, որոնք հանդիպումներ են անցկացրել Ղարաբաղյան թիմի հետ:

Անշուշտ, ասելիք ես ավելի շատ ունեմ, քան կարողացել եմ վերարտադրել այս գրքուկում: Ծիշտն ասած, ես նպատակ չեմ էլ ունեցել 40-ամյա իմ մարզական-մարզչական կյանքը ամենայն մանրամասնությամբ շարադրելու այս գրքում: Պարզապես ես փորձել եմ համառոտ ներկայացնել այդ ժամանակահատվածի «Ղարաբաղ»-«Արցախ» ֆուտբոլային թիմի մարզական վայրէջքներն ու վերելքները, հատկապես վերելքները, որ պատիվ են բերում ցանկացած երկրամասի և, խոստովանեմ, իսկապես էլ ավելի բարձրացրին մեր փոքրիկ լեռնաշխարհի պատիվը:

Շատ տարիներ են անցել այդ օրերից, մարզական հաջողություններ

րով լեցուն այդ ժամանակներից: Մենք ծանր ու դաժան պատերազմ ապրեցինք, ազատագրեցինք մեր երկիրն ու այսօր պետություն ենք կառուցում: Սակայն, ցավոք, շատ ու շատ հարցերում մենք ոչ թե առաջընթաց, այլ հետընթաց ենք ապրում: Այդ թվում և հատկապես ֆուտբոլային կյանքում: Մտահոգիչն այն է, որ մենք տասնամյակներ առաջ հանդես ենք եկել ԽՍՀՄ ֆուտբոլիի Ա խմբի առաջնություններում և հաղթել վարպետ այնպիսի թիմերի, ինչպիսիք Երևանի «Արարատն» է, Բաքվի «Նևֆտչին», «Դինամոն» և այլ թիմեր, իսկ այսօր, ունենալով պետական անկախություն, հանդես ենք գալիս ֆուտբոլի փողոցային առաջնություններում, հաղթում ու ուրախանում... դա արդեն ֆուտբոլ չէ, դա ֆուտբոլի տապալում է, որ խորը հիասթափություն է առաջացնում թե՛ ֆուտբոլասերների և թե՛ ֆուտբոլիստների ու ընդհանրապես մարզասերների մոտ...

Ու նաև այս մտահոգությունն է ինձ ստիպել գրիչ վերցնելու և գրելու այս գիրքը, և այն գրելու ողջ ժամանակահատվածում իմ մեջ շարունակ ապրել է այն հույսը, որ ազատագրված ու անկախ Արցախը կրկին կվերապրի անցած-գնացած, մարզասերների համար երջանիկ հուշ դառած ֆուտբոլային հաղթարշավը...

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



1951թ. Ստեփանակերտի ֆուտբոլի հավաքականը
 Զախից՝ դատավորներ Ենոկ Ավագյան, Տոֆիկ Բախրասով (գլխավոր դատավոր),
 Գրիգորի Ախնազարյան, Սուրիկ Բաղդասարյան (թիմի ավագ), Ալբիկ Բաղդասարյան,
 Կառլեն Աղամյան, Սուրիկ Հարությունյան, Գրիշա Հակոբյան, Բենիկ Աբկարյան,
 Կառլեն Աղաջանյան, Յուրիկ Հարությունյան, Գոգա Տերտերյան, Սերգեյ Հարու-
 յունյան:

Այս թիմը 1951թ. մասնակցել է ՍՍՀՄ ֆուտբոլի գավաթի խաղարկությանը:

ԽՍՀՄ ֆուտբոլի առաջնության ավարտից հետո 1967 թվականին ԼՂ մարզխորհրդի նախագահ Մուշեղ Օհանջանյանի հրավերով «Արարատ» թիմից տեղափոխվեցի Ստեփանակերտ: Արդեն ամուսնացած էի, երիտասարդական ավյունով լեցուն: Ի դեպ, Ստեփանակերտում արդեն սկսվել էր նոր մարզադաշտի շինարարությունը, և ես ետում էի Ղարաբաղում ֆուտբոլային մարզաձևը էլ ավելի զարգացնելու մեծագույն ցանկությամբ:

Արցախում ֆուտբոլը մի քանի անգամ առաջխաղացում է ապրել 1950-60 թվականներին, երբ Ստեփանակերտի մի քանի թիմեր՝ «Կրասնի գնամիան», «Սպարտակը», «Դինամոն» և այլ թիմեր հաջողությամբ մրցակցում էին իրար հետ: Ֆուտբոլը վերելք էր ապրում նաև 1960-64թթ., երբ ֆուտբոլային ակումբին ֆինանսական աջակցություն էր ցույց տալիս «Կարվին» տրեստի նախագահ Բորիս Հարությունյանը: Նա Բաքվից հրավիրել էր մարզիչներ, սկզբում՝ Ապրես Գրիգորի Խաչատուրովին, այնուհետև՝ Նորիկ Գրիգորյանին: Վերջինս մեծ ավանդ ունի

Ղարաբաղում ֆուտբոլի զարգացման գործում: Այդ տարիներին նրա շնորհիվ 1961թ. Ղարաբաղի թիմը Ադրբեջանի առաջնությունում գրավեց երրորդ տեղը: Արդեն գրագետ խաղ էին ցուցադրում ֆուտբոլիստներ Բենիկ Արզումանյանը, Յաշա Ափյանը, Սուրիկ Հարությունյանը, Ռոբերտ (Ծառա) Ավանեսյանը, բանակայիններ՝ դարպասապահ Պանչենկոն (Լենինականից), Գացալովը, Չեչոտկինը, Սոբակյան (Մոսկվայից), Ռոբիկ Պետրոսյանը, Արմեն Ծատրյանը, Էոնեստ Բաբախանովը (բժիշկ և խաղացող), Հաշրաֆ Ալախվերդիևը, Ալբերտ Ղուլյանը (դարպասապահ), զինծառայող Զատր Ծենգելիան և Նորիկ Գրիգորյանը:

1966-70թթ. Ադրբեջանի առաջնությունում «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմն իրեն լավ էր դրսևորել և այդ ժամանակ էլ աչքի էին ընկել ֆուտբոլիստներ Ալբիկ Բաղդասարյանը, Յաշա Ափյանը, Սուրեն Հարությունյանը, Բենիկ Բաբայանը, Ռուդիկ Ստեփանյանը, Մայիս Խասապետյանը (դարպասապահ), Ալբերտ Սարգսյանը, Գարիկ Բալայանը, Ռոբերտ Աղասյանը, Վիտալի Ծաֆերյանը, Յուրի Կարապետյանը, Արտեմ Ժամհարյանը և ուրիշները:



1960-1961թթ. «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմը
Զախից՝ Նորայր Գրիգորյան, Ալբիկ Բաղդասարյան, Ռոբիկ Ավանեսյան (Ծառա),
Ռազմիկ Պետրոսյան, Սուրիկ Հարությունյան, Ռոբերտ Հայրումյան, Յուրիկ Գետրո-
զյան, Բենիկ Գրիգորյան, Բենիկ Արզումանյան, Բորիկ Թավադյան:



3. 1961թ. «Ղարաբաղ» Ստեփանակերտ, Ադրբեջանի բրոնզե մեդալակիր
Զախից՝ մարզիչ Նորայր Գրիգորյան, Բենիկ Արզումանյան, Ալբերտ Ղուլյան,
Պանչենկո, Ռոբիկ Ավանեսյան (Ծառա), Ռոբիկ Պետրոսյան, Սոբակյա, Մանիչե,
Ռազմիկ Պետրոսյան, Չեչոտկին, Հաշրաֆ Ալախվերդիև, Գացալով, Արմեն Ծատր-
յան, Զատր Ծենգելիյա:

Այդ նույն թվականին Ստեփանակերտ քաղաքի առաջնությունում մասնակցում էին հիմնարկ-ձեռնարկությունների 10-12 թիմեր: Վերջիններիս ղեկավարներն իսկական ֆուտբոլասերներ, հայրենասերներ էին: Նրանց թվում էին Բորիս Հարությունյանը, Սերգեյ Խաչատրյանը, Արկադի Մանուչարովը, Բորիս Գադասյանը, Ալբերտ Սեյրանյանը, Սերգեյ Գրիգորյանը, Յուրի Ավագիմյանը, Հենրիկ Պողոսյանը, Կուրաթ Բոշարյանը և ուրիշները:

1957-70 թվականներին որքան էս առիթ էս ունեցել խաղալու Գրիշա Հակոբյանի, Սուրիկ Բաղալյանի, Սուրիկ Զաբիլյանի, Ալբիկ Բաղդասարյանի, Սուրիկ Հարությունյանի, Բենիկ Արզումանյանի, Ալբերտ Սարգսյանի, Ռուդիկ Ստեփանյանի, Էոնեստ Բաբախանովի, Կառլեն Աղասյանի, Արեգ Նաչարյանի և այլոց հետ և անկեղծորեն կարող էս խոստովանել, որ նրանք կարող էին դառնալ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստներ:

Ես արդեն ֆուտբոլային մարզաձևի որոշակի փորձ ունեի, այդ թվում՝ նաև մարզչական գիտելիքներ ու կարողություններ և 1967 թվականից սկսեցի պատանի ֆուտբոլիստներ հավաքագրել ու մարզել: Պետք է նշեմ, որ դեռ զինվորական ծառայության տարիներին խաղում էի Անդրկովկա-



Գրոհում է Ռուդիկ Ստեփանյանը:

սի օկրուգի հավաքական թիմում («Վոստոկ» Բաքու), որը երկու անգամ դարձել է Ադրբեջանի չեմպիոն ու երկու անգամ նվաճել Ադրբեջանի գավաթը, 1961-64թթ. դարձել ԽՍՀՄ զինված ուժերի արծաթե մեդալակիր, իսկ 1964թ. ԽՍՀՄ կոլեկտիվ գավաթի խաղարկությունում գրավել երկրորդ տեղը: Այնուհետև Նովոոսիյսկի «Ցեմենտ» թիմի կազմում դարձել են «Բ խմբի» չեմպիոն: Իսկ երբ 2000-01թթ. Ղարաբաղում որոշում էին, թե ով է 20-րդ դարի լավագույն արցախցի մարզիկը, ԼՂ սպորտկոմիտեն և «մարզասեր» այլ ղեկավարներ տվեցին մի այնպիսի մարդու թեկնածություն, որը ոչ մի անգամ Ադրբեջանի չեմպիոն չի դարձել ու չի խաղացել ոչ մի վարպետ թիմում: Այսքանն իմիջիայլոց, որովհետև մեր փոքրիկ երկրամասում վերջերս այնքան շատ անարդարություններ են կատարվում, որ այլևս չեն զարմանում: Այդպիսի մի օրինակ էլ. երբ պիտի որոշեին, թե որ թիմի նկարը պետք է տպագրվի ԿՄՍ նախարարության սպորտի բաժնի ամսագրում, և այնպիսի մի թիմի նկար տեղադրեցին, որը Ադրբեջանի առաջնությունում կամ ԽՍՀՄ առաջնությունում ոչ մի անգամ առաջավոր տեղ չի զբաղեցրել: Հուսով եմ, որ սպորտի ղեկավարները մի օր կվերացնեն այս և նմանօրինակ անարդարությունները...

Եվ այսպես, 1967թ. սկսեցի մարզել պատանի ֆուտբոլիստներին: Սկզբում անցկացրեցինք բակային առաջնություն, որին այդ մասնակ-



1961-1964թթ. Բաքվի «Վոստոկ». Անդրկովկասի հավաքական, ՍՍՀՄ զինված ուժերի առաջնության արծաթե մեդալակիր, Ադրբեջանի կրկնակի չեմպիոն և գավաթակիր:

Կենտրոնում՝ թիմի պետ Մայրո Գրիգորյան, նստածներից աջից՝ Ռազմիկ Պետրոսյան, 1964թ.:

ցում էին 50-60 թիւ: Ամեն օր ինձ մոտ նշումներ էի կատարում և ընտրում լավ խաղացողներին: 1967թ. բակային առաջնությունում լավագույն ունբարկուներ էին Հարությունը, Գրիգորյանը (Ագան) և Վալերի Հայրիյանը: Պարապմունքներն անց էին կացվում Մոգիլսկի (այժմ՝ Նելսոն Ստեփանյան) փողոցի վրա գտնվող սպորտհրապարակում, որը կառուցվել էր իմ նախաձեռնությամբ, մինչև անգամ բոլոր մրցումներն այդտեղ էին կատարվում, քանի որ մարզադաշտի շինարարությունը դեռ չէր ավարտվել:

Լավ պատանիներ էի հավաքագրել, որոնք իմ բոլոր խորհուրդները շատ արագ ըմբռնեւմ էին և աշխատում ճիշտ կատարել: Զգտում էի նրանց դաստիարակել հայրենասիրական ոգով, սովորեցնում էի նկունություն, ֆիզիկական պատրաստականություն, տարբեր վարժություններով փորձում էի բարձրացնել նրանց դիմադրողականությունն ու կայունությունը: Մի հնարքը, որ ցույց էի տալիս, մինչև բոլորը չէին տիրապետում, հաջորդին չէի անցնում: Հիմնական պարապմունքները չէի սկ-



1978թ. «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմի ձմռան պարապմունքները:




5. Չախից Բենյամին Բաբայան, ՍՍՀՄ պատանիների հավաքականի անդամ Լ. Էդուարդ Բաղդասարյանը՝ մարզիչ Ռազմիկ Պետրոսյանի հետ, 1968թ.:

սում, քանի դեռ չէին կատարել լիցքային վարժություններ: Դա էր պատճառը, որ հետագայում մի քանի շատ տքնաջան պատանիներից ստեղծեցինք պրոֆեսիոնալ թիմ, որտեղ տղաները կարողացան իրենց դուսերել որպես պրոֆեսիոնալ խաղացողներ:

Պարապմունքներն անց էինք կացնում ձմեռը՝ կրոսավազքեր, մարմնամարզություն, ռեգբի, բասկետբոլ, ծանրամարտ, ըմբշամարտ, թեթև ատլետիկա և այլն: Դրա համար բոլոր մարզաձևերից կարող էինք պաշարի մեջ մտնել տարբեր թիմերի հետ:

Սկզբնական շրջանում ես հավաքագրեցի 12-15 տարեկան ֆուտբոլիստների, որովհետև մեծահասակ խաղացողներ մենք ունեինք, մինչդեռ չունեինք փոխարինողներ՝ թիմը համալրելու համար: Առաջին թիմի խաղացողներն էին՝ Վալերի Պողոսյանը, Բենիամին Բաբայանը, Արայիկ Ավագյանը, Վարդգես Բաղդյանը, Հրաչիկ Սարգսյանը, Սերժիկ Աղաջանյանը (Սիմկա), Վալերի Աղաջանյանը, Վաչիկ Սարգսյանը, Սյոմա Ծաբանյանը, Էդիկ Հարությունյանը, Վալերի Հայրունյանը (Վակո), Յուրի



Վլադիմիր Պետրոսյանը իր մարզիչ Ռազմիկ Պետրոսյանի հետ, 1968թ.:



Լիուարդ Բաղդասարյանը Ռազմիկ Պետրոսյանի հետ:

Հարությունյանը (Հոպա), Էդիկ Բաղդասարյանը (Բակինկա), Միքայել Հայրիյանը, Աշոտ Գրիգորյանը, Սլավիկ և Վաչագան Հայրապետյանները, Համայակ Ավանեսյանը, Էդուարդ Դավթյանը, Սերժիկ Խաչատրյանը (Սերժանտ):

Այդ թվականներին պատանի ֆուտբոլիստների հետ այնպիսի պարապմունքներ էի անցկացնում, որը համապատասխանում էր վարպետ թիմերի պարապմունքներին: Երկու ֆուտբոլիստներ՝ Էդուարդ Բաղդասարյանը և Գագիկ Ծատրյանը, այնուհետև խաղացին ԽՍՀՄ պատանի հավաքականի կազմում, մասնակցել են տարբեր առաջնությունների և մրցաշարերի:

Մի անգամ մարզադաշտում թեթև ատլետիկայի մարզումներ էր անցկացնում Նոբել Ավագյանը, որը ամենալավ մասնագետն էր Ղարաբաղում: Առաջարկեցի իր հալեցողությամբ ցանկացած տարածավազք ընտրել, որին կմասնակցի նաև իմ մարզիկը: Նա չէր կասկածում, որ իր սաները կհաղթեն և առաջարկեց 100 մ, 800 մ և 5 կմ տարածավազք: 100 մ վազքում հաղթանակ տարավ ֆուտբոլիստ Վալերի Հարությունյանը՝ Հոպանը: 800 մ վազքում մրցակցին 20 մ իրենից հետ թողեց Վլադիմիր Ավագյանը, իսկ 5 կմ կրոսում հաղթեց Կառլեն Սիմոնյանը:

Ավագյանը մնացել էր ապշած և ասաց, որ բոլոր մարզիչները պետք է ինձ մոտ պարապեն, քանի որ, իր խոսքերով, ես իսկական պրոֆեսիոնալ մարզիչ եմ:

1969-70թթ. պատանի ֆուտբոլիստները Ադրբեջանի առաջնություն-



«Արարատ» Երևան, 1966թ., Գագրա, Ոստաննա-մարզական հավաք: Աջից՝ Կովիլենկո, Զիրայան, Ռազմիկ Պետրոսյան:

ներում առաջատար տեղեր զբաղեցրին: Բոլոր թիմերի հետ բավականին հեշտ էին խաղում: Եթե դատավորներն արդար էին դատում, ապա անպայման հաղթանակը մերն էր լինում, իսկ եթե նրանք կաշառված էին լինում, ապա խաղն ավարտվում էր ոչ-ոքի: Ամենալավ թիմը Ադրբեջանում Բաքվի «Նեֆտչի» պատանի ֆուտբոլիստներն էին, երկրորդը՝ մենք:

1971թ. Ադրբեջանի սպարտակիադայի ժամանակ Ռազմիկ Ստեփանյանը մեզ առաջարկեց մասնակցել այդ խաղերին: Քանի որ մեր թիմը կոչվում էր «Դինամո», ապա անպայման Դինամոյի ղեկավարները պետք է թույլատրեին, որպեսզի մենք մասնակցեինք այդ մրցումներին: «Դինամոյի» ղեկավար Բորիս Ղարալյանը տվեց իր համաձայնությունը: Միաժամանակ նա ասե՛ն ինչ անում էր, որպեսզի մեր ֆուտբոլիստները լիարժեք պարապմունքներ անցկացնեին «Դինամո» մարզադաշտում:

1971թ. մենք ժամանեցինք Սումգայիթ՝ մասնակցելու Ադրբեջանի սպարտակիադային: Պետք է նշեմ, որ թիմերը լավ նախապատրաստված էին: Եզրափակիչ մրցումներին մասնակցում էին ութ թիմ: Մեր թիմը հաղթելով իր մրցակիցներին, մտավ կիսաեզրափակիչ, որտեղ պետք է ուժերը չափեր Բաքվի հավաքականի հետ (այն կազմված էր Ադրբեջանի հավաքականի ֆուտբոլիստներից): Այդ խաղը մեր ֆուտբոլիստներն անցկացրեցին մեծ վերելքով, հարձակողական ոճով և, կարելի է ասել,



«Արարատ» ֆուտբոլային թիմը Գագրայում: Զախից՝ Ռազմիկ Պետրոսյան, Կլոդ Ավետիսյան, Ալեքսանդր Կովալենկո, Սարգիս Հովհիվյան:

որ Բաքվի թիմը ոչ մի հնարավորություն չուներ մեզ հաղթելու: Այնպիսի սրընթաց գրոհներ էին իրականացնում մեր մեր ֆուտբոլիստները, որ հակառակորդն ընդհանրապես հնարավորություն չէր ունենում կասեցնելու դրանք: Մեր տղաները հաղթեին Բաքվի թիմին և մտան եզրափակիչ, որտեղ պետք է մրցեին Սումգայիթի հավաքականի հետ:

Այդ խաղը պետք է անցկացվեր Բաքվի հանրապետական մարզադաշտում: Մեր թիմին ուղարկեցին Բաքու, բայց այնուհետև փոխեցին իրենց որոշումը, և խաղն անցկացվեց Սումգայիթի մարզադաշտում: Հազիվ հասցրինք Բաքվից վերադառնալ Սումգայիթ և պատրաստվել եզրափակիչ խաղին:

Այդ օրերին Սումգայիթում համերգներով հանդես էր գալիս ԼՂԻՄ պետական էստրադային համույթը՝ Գենադի Բարխուդարովի ղեկավարությամբ: Ես գգում էի, որ դատավորներն ասե՛ն ինչ անելու են, որպեսզի մեր թիմը պարտվի, ուստի գնացի հյուրանոց՝ Գ. Բարխուդարովի մոտ և խնդրեցի, որ ինքը ներկա գտնվի խաղին և ներկայանա որպես Ղարաբաղի կոմերիտիության առաջին քարտուղար: Նա համաձայնեց՝ ասելով, որ եթե թիմն այդքան լավ է խաղում ու մտել է եզրափակիչ, ապա ինքն այնպայման կգա:



«Արարատ» եւ «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմերը Ստեփանակերտի համալիրում:

տնօրեն, Գրիշա Հակոբյանը՝ ֆուտբոլիստ, Ալբերտ Հակոբջանյանը՝ ըմբշամարտիկ: Շքերթը ղեկավարում էր Գեորգի Շահրամանյանը:

«Ղարաբաղ» Ստեփանակերտ - «Տեքստիլշիկ» Մինգեչաուր 1:1:

Մեր թիմի կազմը՝ Էդիկ Բաղդասարյան, Կամո Գևորգյան, Հրանտ Մելքունյան, Պավլիկ Սարգսյան, Ռազմիկ Սարգսյան, Ալբերտ Սարգսյան, Բենիամին Բաբայան, Սերգեյ Մովսիսյան, Յուրի Կարապետյան, Վալերի Դանիելյան, Արտեմ Ժամհարյան, Անատոլի Հակոբյան, Համլետ Ստեփանյան, Գարիկ Բալայան, Վլադիմիր Ապրեսյան, Ռազմիկ Պետրոսյան, Յուրի Բոչառով, Վյաչեսլավ Աղաջանյան, Վլադիմիր Մինենկո:

«Ղարաբաղ» թիմից գուր խփել է Համլետ Ստեփանյանը, իսկ Մինգեչաուրից՝ Ելիսենը: Խաղը դատել են Ֆարգալիկը և Հասանովը՝ Նախիջևանից և Գրիգորի Աթայանը՝ Ստեփանակերտից: Թիմի գլխավոր մարզիչն էր Միքայել Մկրտիչևը:

Առաջինը գնդակին հարվածելու պատիվը վերապահվել է ժողովրդական արտիստ Գուրգեն Հարությունյանին:

1969թ. Ստեփան Շահունյանի անվան մարզադաշտի բացումը զգալիորեն խթանեց ֆուտբոլի զարգացմանը Ղարաբաղում: Երկրորդ խաղաշրջանում թիմը համալրվել էր. Միքայել Մանուշարով, Ռոբերտ Աղասյան, Սեյրան Պետրոսյան (Գորիս), Վլադիմիր Այվազյան, Զավադյան, Քոչարով, Մնացականյան: Ամեն խաղի ժամանակ Ստեփանակերտի



«Արարատ-73». Երեսան:

բնակչության մեկ երրորդը լինում էր մարզադաշտում: Մեր թիմի խաղը դիտելու էին գալիս անգամ երեխաները, կանայք և թոշակառուները: Ժողովուրդը երախտագիտությամբ է հիշում այն ժամանակվա մեր ղեկավարներին, որոնք ջանք ու եռանդ չեն խնայել մարզադաշտի կառուցման համար: Նրանցից են Մուշեղ Օհանջանյանը, Գուրգեն Մելքունյանը, Կուրաթ Քոչարյանը, Բեգլարովը և ուրիշներ:

Ներկայացնում են այնտեղ կայացած խաղերի ընդամենը մի մասը:

17 Մայիսի 1969թ., «Ղարաբաղ»-«Դաշգրն» Զաքարյալա՝ 2:2, գուրը խփեցին Ռ. Պետրոսյանը և Գ. Բալայանը:

8 հունիսի, 1969թ., «Ղարաբաղ»-«Կոլխեթի» Թելավի՝ 0:0, մեր թիմի կազմը՝ Գ. Մելքունյան, Պ. Սարգսյան, Ռ. Սարգսյան, Բ. Բաբայան, Ա. Սարգսյան, Յ. Կարապետյան, Վ. Դանիելյան, Ս. Մովսիսյան, Ա. Ժամհարյան, Հակոբով, Ստեփանյան, Բալայան, Ապրեսյան:

8 հուլիսի 1969թ., «Ինգուրի»-«Ղարաբաղ»՝ 0:1, գուր խփեց Գ. Բալայանը:

12 հուլիսի 1969թ., «Դինամո» Սուխումի-«Ղարաբաղ»՝ 0:1, գուր խփեց Գ. Բալայանը:

19 հուլիսի 1969թ., «Ղարաբաղ»-«Գուրիա» Լանջսուրի՝ 1:1, գուր խփեցին Ռ. Պետրոսյանը և Չխարտաշվիլին:

23 հուլիսի 1969թ., «Ղարաբաղ»-«Կոլխիդա» Փոթի՝ 2:0, գուրը խփեց Հակոբյանը: Մեր թիմի կազմը՝ Կ. Գևորգյան, Ռ. Սարգսյան, Բ.



«Ղարաբաղ» ֆուտբոլային թիմը ընկերական հանդիպման ժամանակ «Արարատի» ֆուտբոլիստների հետ:

Բաբայան, Քոչարովը, Աղաջանյան, Մովսիսյան, Ա. Սարգսյան, Ռ. Ստեփանյան, Դանիելյան, Ռ. Պետրոսյան, Հակոբյան, Գ. Բալայան, Կարապետյան, Ապրեսյան:

27 հուլիսի 1969թ., «Լոռի» Կիրովական-«Ղարաբաղ»՝ 3:0:

Հիվանդության պատճառով խաղին չեն մասնակցել հիմնական կազմի խաղացողներ Բ. Բաբայանը, Ռ. Սարգսյանը և Ռ. Պետրոսյանը:

Առաջին խաղաշրջանից հետո «Ղարաբաղ» թիմը տոնեց 5 հաղթանակ, 7 խաղ ավարտեց ոչ-ոքի հաշվով, 7 խաղում պարտություն կրեց: Գլխավոր մարզիչն իր ելույթում նշել էր, որ թիմը համարվելու կարիք ունի և որ առաջին խաղաշրջանում իրեն լավ է դրսևորել Բենիամին Բաբայանը:

23 օգոստոսի 1969թ., «Ղարաբաղ»-«Արազ» Նախիջևան՝ 0:0, մեր թիմի կազմը՝ Մելքունով, Պ. Սարգսյան, Ռ. Պետրոսյան, Մինենկո, Մանուչարյան, Մովսիսյան, Ա. Սարգսյան, Զավադյան, Քոչարով, Բալայան, Ապրեսյան:

27 օգոստոսի 1969թ., «Ղարաբաղ»-«Լեոնագործ» Ղափան՝ 1:0, գուր խփեց Գ. Բալայանը:

3 սեպտեմբերի 1969թ., «Ղարաբաղ»-«Զիատուրիա»՝ 2:1, գուրը խփեց Ռ. Պետրոսյանը:

28 սեպտեմբերի 1969թ., «Ղարաբաղ»-«Դիլա» Գորի՝ 0:0, մեր թիմի կազմը՝ Մելքունով, Պ. Սարգսյան, Ռ. Սարգսյան, Մինենկո, Կարապե-

տյան, Ա. Սարգսյան, Ս. Պետրոսյան, Ռ. Ստեփանյան, Ռ. Պետրոսյան, Ալվազյան, Ա. Ժամհարյան:

15 հոկտեմբերի 1969թ., «Ղարաբաղ»-«Ինգուրի»՝ 3:0, մեր թիմի կազմը՝ Է. Բաղդասարյան, Պ. Սարգսյան, Ա. Սարգսյան, Մինենկո, Մանուչարով, Կարապետյան, Ստեփանյան, Ռ. Պետրոսյան, Ալվազյան, Ժամհարյան: Ավագ մարզիչ (նաև խաղացող) Ռ. Պետրոսյան, մարզիչ՝ Էդուարդ Ավագով, գուրը խփեցին Ալվազյանը և Ժամհարյանը:

1970թ.

«Ղարաբաղ» Ստեփանակերտը հանդես է եկել Ռուսաստանի Ֆեդերացիայի երկրորդ գոտում:

1. «Ղարաբաղ» Ստեփանակերտ

2. «Արազ» Նախիջևան

3. «Տեքստիլչիկ» Մինգեչաուր

4. «Ավտոմոբիլիստ» Երևան

5. «Սևան» Հոկտեմբերյան

6. «Լեոնագործ» Ղափան

7. «Լոռի» Կիրովական

8. «Նարզան» Կիսլովոդսկ

9. «Ուրալան» Էլիստա

10. «Ուրոժայ» Սվետլոգրադ

11. «Զնամիա Տրուդա» Օրեխովո Զուևո

12. «Մետեոր» Ժուկովսկ

13. «Կովրովեց» Կովրով

14. «Քիմիկ» Նովոմոսկովսկ

15. «ՕԿա» Ստուպինո

16. «Թերեք» Գրոզնի

17. «Ուրոժայ» Ալեքսանդրովսկ

18. «Ուրոժայ» Գերբենտ

«Ղարաբաղ» թիմի կազմը՝

Գարպասապաններ՝ Հրանտ Մելքունյան, Էդուարդ Բաղդասարյան Պաշտպաններ՝ Պավել Սարգսյան, Ալբերտ Սարգսյան, Վլադիմիր Մինենկո, Միխայիլ Մանուչարով

Կիսապաշտպաններ՝ Ռոբերտ Աղապյան, Յուրի Կարապետյան, Սլավա Հովհաննիսյան, Ալբերտ Միրզոյան, Սերգեյ Մարտիրոսով, Վլադեսլավ Աղաջանյան

Հարձակվողներ՝ Ռաֆայել Մարտիրոսով, Գագիկ Ծատուրյան, Գա-



«Ղարաբաղ» ֆուտբոլային թիմը, 1970թ.:
 Զախից՝ Ավագով, Միքայել Գարբիելյան (ադմինիստրատոր), Պավել Սարգսյան, Հովհաննիսյան, Ալբերտ Սարգսյան, Էդուարդ Բաղդասարյան, Մինենկո, Գասպարյան, Հրանտ Մելքունյան, Արտեմ Ժամհարյան, Ռազմիկ Պետրոսյան (ավագ մարզիչ): Նստած են՝ Ռոբերտ Աղասյան, Յուրի Կարապետյան (Ջաբի), Մանուչարյան, Սեդրեկ Մարտիրոսով, Վալերի Աղաջանյան (Լալա), Ռաֆիկ Մարտիրոսով, Վլադիմիր Այվազյան, Վաչագան Հայրապետյան:

րիկ Բալայան, Վաչագան Հայրապետյան, Վլադիմիր Այվազյան, Արսեն Գասպարյան, Գարիկ Բալայան, Արտեմ Ժամհարյան, Ալեքսանդրյան: Թիմի ավագ մարզիչ՝ Ռազմիկ Պետրոսյան (խաղացող):

14 մայիսի 1970թ., «Ղարաբաղ»-«Զնամիա Տրուդա» Օրեխովո Զուևո՝ 0:0:

Ֆուտբոլային սեզոնի բացմանը ելույթ ունեցավ ԼՂԻՄ սպորտկոմիտեի նախագահ Ալբերտ Գրիգորյանը: Մարզադաշտում դրոշմները բարձրացրեցին թիմերի ավագները՝ Ալբերտ Սարգսյանը և Ֆյոդորովը:

«Ղարաբաղ» թիմի կազմը՝ Մելքունով, Պ. Սարգսյան, Ա. Սարգսյան, Մինենկո, Մանուչարյան, Ս. Մարտիրոսով, Հովհաննիսյան (Ժամհարյան), Պետրոսյան, Ռ. Մարտիրոսով, Բալայան (Աղասյան), Այվազյան (Կարապետյան):

Դատավորները Մախաչկալայից էին՝ Մատատով, Կասաբով, Մամեդով:



1970թ. խաղից մի քանի րոպե առաջ:

«Զնամիա Տրուդա» Օրեխովո Զուևո թիմը երկրորդ գոտու ամենաուժեղ թիմերից էր, մասնակցել է ԽՍՀՄ գավաթի խաղարկության կիսաեզրափակիչ և եզրափակիչ խաղերին: Ես խաղից առաջ զգուշացրել էի մեր թիմին և ռիսկ չէի անում հարձակողական ֆուտբոլ խաղալ, ինչպես նաև սեզոնի բացումն էր և ոչ ոք չէր ուզում պարտվել: Այդ էր պատճառը որ խաղի առաջին կեսում ես ընտրել էի պաշտպանողական տակտիկա, բայց երբ երկրորդ խաղակեսից անցել էր քսան րոպե, կանչեցի Արտեմ Ժամհարյանին և պատրաստեցի նրան խաղադաշտ մտնելուն:

Այդ ժամանակ մարզադաշտը լեփ-լեցուն էր և բոլորը միաժամանակ սկսեցին ծափահարել (այդպես էին դիմավորում Արտեմ Ժամհարյանին, երբ նա դաշտ էր մտնում): Երբ դատավորը մոտեցավ, որպեսզի թույլ տա փոխարինումը, ողջ մարզադաշտը ոտքի կանգնած ծափահարում և ողջունում էր Ժամհարյանին: Այդ ժամանակ մոտեցավ Օրեխովո Զուևոյի մարզիչը՝ պահանջելով ցույց տալ այդ խաղացողի քարտը, որը նրան իրավունք էր տալիս մտնել խաղադաշտ: Ես նրան ասացի, որ ցույց կտամ խաղի վերջում: Ժամհարյանի դաշտ մտնելուն պես Օրեխովո Զուևոյի մարզիչը կանչեց թիմի ավագ Ֆյոդորովին և նրան ցուցում տվեց մշտական վերահսկողության տակ պահել նոր խաղացողին: Ժողովրդի ցնծությունը տեսնելով՝ նա համոզված էր, որ նորեկը «Արարատ» թիմից

է: Մի քանի րոպե հետո սակայն նա նորից կանչեց Ֆյոդորովին՝ ասելով, որ կարիք չկա հետևելու և որ ինքը կարող է իր տեղում խաղալ:

Խաղից հետո, հյուրասիրության ժամանակ հակառակորդ թիմի մարզիչը խոստովանեց. «Լավ տրյուկներ էիր սարքել, ես կարծեցի իշտոյանին ես «Արարատից» բերել, ժողովրդի ոգևորությունը ինձ շփոթմունքի մեջ էր գցել, բայց հետո ասե՛ն ինչ նորմալ պայմաններում անցավ»:

27/02-70թ. Ընկերական հանդիպում՝ «Ղարաբաղ»-Լեոնազործ (Ղափան)՝ 2:0, գոլերը խփեցին Վ. Աղաջանյանը, Վ. Այվազյանը:

09/03-70թ. Ընկերական հանդիպում՝ «Ղարաբաղ»-«Նեֆթչի» (Բաքու)՝ 2:0, մեր թիմի կազմը՝ Ա. Բաղդասարյան, Պ. Սարգսյան, Ա. Սարգսյան, Միսենկո, Մանուչարյան, Միրզոյան (Ժամհարյան), Ռ. Պետրոսյան, Հովհաննիսյան, Վ. Հայրապետյան (Կարապետյան), Բալայան, Այվազյան:

Գոլերը խփեցին՝ Վաչագան Հայրապետյանը և ավագ մարզիչ Ռազմիկ Պետրոսյանը:

«Նեֆթչի» թիմի կազմը՝ Ռասուլով, Ադիլ Բաբան, Ռահիմով, Յաշար Բաբան, Վ. Սյոմին, Պուշկով, Միրզոն, Ռզակ, Աբդուլան, Ալի-Ջադե, Համզակ: Ավագ մարզիչ՝ Վաչեալավ Խլստով:

Դատավոր՝ Գրիգորի Աթայան:

26/03-70թ. «Ղարաբաղ»-«Դինամո» Կիրովաբադ՝ 1:1, գոլը խաղի 90-րդ րոպեին խփեց Ռ. Պետրոսյանը՝ տուգանային հարվածով:

28/03-70թ. Ընկերական հանդիպում՝ «Ղարաբաղ»-«Փոլադ» Սումգայիթ՝ 3:3, գոլերը խփեցին Գ. Բալայան և Ռ. Պետրոսյանը:

Դատավոր՝ Կոստանտին Բադալյան:

16/04-70թ. «Ղարաբաղ»-ԲՍՍ Բաքու՝ 2:1, գոլերը խփեցին Ս. Մարտիրոսովը, Ալ. Հովհաննիսյանը:

Այսքանը ես գրում եմ, որպեսզի մարդիկ, մարզասեր նոր սերունդը իմանա, թե ինչ ֆուտբոլ ենք ունեցել մենք և ինչպիսի թիմերի հետ ենք խաղացել ու հաղթել: Այնինչ հիմա, երբ Ղարաբաղը ազատ է և անկախ, ֆուտբոլը վերացրել են, մարզադաշտը կարծես դիտմամբ քանդել են, որպեսզի երեխաներն այնտեղ չխաղան: Իսկ թե այն երբ կվերականգնվի՝ անհայտ է:

1967-70թթ. մենք զիշեր ու ցերեկ աշխատում էինք, որպեսզի ֆուտբոլը զարգանա, իսկ հիմա ֆուտբոլը մեզանում դարձել է միայն գեղեցիկ հուշ: Դրա փոխարեն երեխաներին ինչ հիմարություն ասես, որ չեն հրամցնում: Փող աշխետելու մոլուցքով տարված պայթուցիկ լուցկիներ են բերում ու վաճառում երեխաների վրա: Ֆիզիկապես զարգանալու, այս կամ այն գեղեցիկ մարզաձևով զբաղվելու փոխարեն նոր սերունդը տարվում ավելի ժամանակակից բջջային ձեռք բերելու մոլուցքով, որպեսզի դրանով զարմացնի իր հասակակիցներին: Անգամ թուրքական երգ-երաժշտություն են լսում, որովհետև մեզանում քամահրանքով են վերաբերվում մատաղ սերնդի դաստարակության խնդիրներին:

Այն ժամանակ էլ կային հիմար ղեկավարներ, որոնց համար նշանակություն չուներ ֆուտբոլի զարգացումը, բայց և կային այնպիսիք, այդ թվում՝ հիմնարկների ղեկավարներ, ովքեր ջանք չէին խնայում ֆուտբոլի զարգացման համար: Նրանք աշխատանքի էին տեղավորում ֆուտբոլիստներին, լուծում էին վերջիններիս ֆինանսական խնդիրները, որպեսզի նրանք բարձր պահեն մեր երկրամասի մարզական պատիվը:

1972թ. «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմը խաղացել է Ռուսաստանի Ֆեդերացիայի երկրորդ լիգայի չորրորդ գոտում: Թիմի պետ էր նշանակվել Ալֆրեդ Տեր-Մարգարյանը, իսկ ավագ մարզիչ՝ Հրաչ Պետրոսովը՝ (երկուսն էլ՝ Բաքվից): Ռազմիկ Պետրոսյանին չէին վստահում, պատճառաբանելով, որ նա միայն հայերին է վերցնում թիմի կազմում:

Նշեմ նաև, որ 1971թ. «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմի պատանհները, որոնց մարզիչն էի ես, այնքան լավ մարզավիճակում էին, որ Ադրբեջանում, անկախ ասե՛ն ինչից, թիմը պետք է դուրս գար երկրորդ լիգա, քանի որ այլ քաղաքներում այդպիսի պատանհներ չկային:

Ներկայացնում եմ ԽՍՀՄ երկրորդ լիգայի չորրորդ գոտու թիմերը:

1. «Ղարաբաղ» Ստեփանակերտ
2. «Շիրակ» Լենինական
3. «Լոռի» Կիրովական
4. «Դինամո» Կիրովաբադ
5. «Դինամո» Ստավրոպոլ
6. «Մաշուկ» Պլատիգորսկ
7. «Ուրալան» Էլիստա
8. «Թերեք» Գրոզնի
9. «Դինամո» Մախաչկալա
10. «Վոլգար» Աստրախան

11. «Բարիկաղ» Վոլգոգրադ
12. «Սպարտակ» Ռյազան
13. «Սպարտակ» Կոստրոմա
14. «Սատուրն» Ռիբինսկ
15. «Վոլգա» Գորկի
16. «Քիմիկ» Դերժինսկ
17. «Մետեոր» Վլադիմիր
18. «Տրոյ» Տամբով

«Ղարաբաղ» թիմի կազմը՝ Է. Բաղդասարյան, Վ. Պետրոսյան, Գա-
գիկ Ծատրյան, Գարուն Աթայան, Վլ. Ապրեսյան, Վլ. Մինենկո, Հասան
Ահմեդով, Ռաֆիկ Բալբոբյան, Միխայիլ Առաքելով, Ծամիլ Էլնուլաև, Ա-
զեր Նագիև, Ալեքսանդր Գորշկով, Կոստանդին Ստեկոլնիկով, Նադիր
Կասումով, Հաջին, Բալայան, Կ. Սիմոնյան, Ախտյամով, Ալիմետով, Ս.
Մելքումով:

1972թ. առաջնությանը «Ղարաբաղը» վատ հանդես եկավ, որովհետև
մարզիչ Հրաչ Պետրոսովը և թիմի պետ Տեր-Մարգարովը լավ չէին տի-
րապետում ֆուտբոլային մարզիչի մասնագիտությանը: Նրանք թիմ էին
հրավիրել ադրբեջանցի այնպիսի խաղացողների, որոնցից մեր շրջան-
ներում շատ կային: Բացի այդ, թիմի պետի առաջնահերթ նպատակը ոչ
թե ֆուտբոլի զարգացումն էր, այլ փող վաստակելը: Նա մարզկոմի նա-
խագահի տեղակալ Ասկերխանովի հետ միասին փող էր վաստակում
ֆուտբոլից: Այդ էր պատճառը, որ առաջնության ավարտից մի քանի
խաղ առաջ ավագ մարզիչին ազատեցին աշխատանքից և թիմի ավագ
մարզիչ նշանակեցին ինձ, իսկ երկրորդ մարզիչ՝ Մերգել Մելքումովին:
Սակայն չկար այն օգնությունը ղեկավարների կողմից, որը ցուցաբեր-
վում էր այլ մարզիչների օրոք:

1972թ. գարնանը անց էր կացվել ֆուտբոլի Ադրբեջանի պատանինե-
րի առաջնություն, որին մասնակցում էին նաև վարպետ թիմերի պատա-
նիները: «Ղարաբաղ» պատանիների թիմի կազմում (որի ղեկավարն էի)
հենց ընդգրկված էին իմ սաները:

28/02-72թ., «Ղարաբաղ»-«Նեֆթչի»՝ 1:0, գոլը խփեց Գագիկ Ծատ-
րյանը:

10/04-72թ., «Ղարաբաղ»-«Տրոյոկովոյ ռեզերվ» Բաքու՝ 4:0, գոլերը
խփեցին Գագիկ Ծատրյանը, Վլադիմիր Ալվազյանը, Վալերի Հայրիա-
նը:

22/04-72թ., «Նեֆթաչալա»-«Ղարաբաղ»՝ 1:2, գոլերը խփեցին Վալե-
րի Հայրիյանը և Կառլեն Սիմոնյանը:

26/04-72թ., «Ղարաբաղ»-«Սպարտակ» Բաքու, գոլերը խփեցին Վլա-
դիմիր Ալվազյանը և Կառլեն Սիմոնյանը:

21/09-72թ., ընկերական հանդիպում, «Ղարաբաղ» - «Արարատ»
Երևան՝ 2:2:

«Արարատ» թիմը հանդես եկավ հետևյալ կազմով՝ Ա. Աբրահամյան,
Ս. Գևորգյան, Ա. Սարգսյան, Ն. Մետրոպոլիս, Ս. Բոնդարենկո, Հ. Զանա-
զանյան, Լ. Իշտոյան, Է. Մարգարով, Ն. Ղազարյան, Ս. Մարտիրոսյան,
Ն. Պետրոսյան:

Դատավոր՝ Գեորգի Աթայան:

Խաղն անցավ համառ պայքրում և «Արարատի» խաղացողները վեր-
ջին վայրկյանին փրկվեցին պարտությունից:

01/10-1973թ., «Ղարաբաղ»-«Արարատ»՝ 1:3, գոլերը խփեցին՝ Ն. Կո-
վալենկո, Ն. Ղազարյան, Ս. Բոնդարենկո, իսկ «Ղարաբաղից»՝ Գարուն
Աթայանը:

Խաղից հետո Նիկիտա Սիմոնյանը հարցազրույցում «Ղարաբաղի»
լավագույն ֆուտբոլիստ է ճանաչել Գարուն Աթայանին:

1973-1976թթ. ես մարզիչ էի աշխատում պատանիների հետ, հիմնա-
կան կազմից հրաժարվել էի, քանի որ մեր ղեկավարները ոչնչով չէին ա-
ջակցում ոչ ֆուտբոլիստներին, ոչ էլ մարզչին:

1976թ. ինձ նորից հրավիրեցին «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմ, բայց
արդեն հանդես գալու Ադրբեջանի առաջնությունում:

8-11/5-1976թ., «Ղարաբաղ»-«Ստրոխտել»՝ 4:2, գոլերը խփեցին Մի-
քայել Հայրիյանը, Վալերի Հայրիյանը, Պարզև Առաքելյանը և Բենիամին
Բաբայանը: Լավագույն ֆուտբոլիստներ ճանաչվեցին Միքայել Հայրի-
յանը, Բենիկ Բաբայանը, Պարզև Առաքելյանը:

20-25/06-76թ., «Ջալիլաբաղ»-«Ղարաբաղ»՝ 1:2, գոլերը խփեցին Վա-
լերի Հայրիյանը, Գենադի Հայրապետյանը:

13/09-76թ., «Ղարաբաղ»-«Վիլյամ մասալը»՝ 1:0, գոլը խփեց Վ. Հայրիյանը:

1976թ. Ադրբեջանի առաջնությունում եզրափակիչ խաղերում «Ղարաբաղ» թիմը խաղացել է 14 խաղ, 9 խաղում հաղթել է, 4 խաղ ավարտվել են ոչ-ոքի, պարտվել է ընդամենը 1 խաղում: Լավագույն ումբարկու է ճանաչվել Պարգև Առաքելյանը՝ 14 գնդակ: Այդ առաջնությունում իրենց որպես լավագույն ֆուտբոլիստներ են դրսևորել Բանիամին Բաբայանը, Միքայել Հայրիյանը, Սյոմա Ասրյանը, Լեոնիդ Հովհաննիսյանը, Վալենտին Հայրիյանը, Կառլեն Սիմոնյանը, Արսեն Սողոմոնյանը, Գեոնդի Հայրապետյանը և դարպասապահ Ազիզ Ալիևը:

16/05-1977թ., Ընկերական հանդիպում. «Ղարաբաղ»-«Արարատ»՝ 2:3, գոլերը խփեցին Անդրանիկ Խաչատրյանը, Էդուարդ Հարությունյանը, Հարություն Մինասյանը՝ «Արարատից» և Կառլեն Սիմոնյանն ու Պարգև Առաքելյանը՝ «Ղարաբաղից»: Խաղն անցավ համառ պայքարում, ներկա էին 13000 հանդիսատես, «Ղարաբաղը» պատրաստվում էր Ադրբեջանի առաջնությանը:

24/05-77թ., «Ղարաբաղ»-«Տրուդոլոյ Ռեզերվ» Ղափան՝ 1:0, գոլը խփեց Վ. Հայրիյանը:

1977թ. «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմը շատ լրջորեն էր պատրաստվել Ադրբեջանի առաջնությանը. ձմեռը պարապմունքներն անց էինք կացրել «Դինամո» մարզադաշտում, իսկ գարնանը մի շարք ընկերական հանդիպումներ էինք ունեցել տարբեր թիմերի հետ, այդ թվում՝ «Արարատի», Ղափանի, Ադդամի թիմերի հետ:

Ադրբեջանի առաջնությունը սկսվել է հունիսի 2-ին: Առաջին խաղն անցավ Ջալիլաբադում, որտեղ խաղում էին հիմնականում Բաքվից հրավիրված ֆուտբոլիստներ: Դատավորներն ամեն կերպ խոչնդոտում էին մեր գրոհները՝ հայտարարելով կամ խաղից դուրս վիճակ, կամ խաղի կանոնների խախտում: Խաղն ավարտվեց 1:1 հաշվով: Մեր թիմից գերազանց խաղաց Բենիամին Բաբայանը, որն էլ դարձավ գեղեցիկ գոլի հեղինակ:

5/06-1977թ., «Էներգետիկ» Ալի Բայրամլի-«Ղարաբաղ» Ստեփանակերտ՝ 0:2, գոլերը խփեցին Վ. Հայրիյանը և Վլ. Ապրեսյանը:



«Ղարաբաղ-77», Ադրբեջանի չեմպիոն:

Ջախից նստած են՝ Վոլյա Հայրապետյան, ..., Սեմա Ասրյան, Գազիկ Գալստյան, Գազիկ Ծատրյան, Սյավա Գաբրիելյան, Ալբերտ Միրզոյան: Ջախից կանգնած են՝ Կառլեն Սիմոնյան, Լեոնիդ Հովհաննիսյան, Բենյամին Բաբայան, Ազիզ Ալիև, վարորդ Ալբերտ Գրիգորյան (Աճկոմ), մարզիչ Ռազմիկ Պետրոսյան, Սեմա Ծաբանյան, Միքայել Հայրիյան, Վալերի Հայրիյան:

8/06-77թ., «Խազար» Լենքորան-«Ղարաբաղ» Ստեփանակերտ՝ 1:0: Խաղի ավարտից հինգ րոպե առաջ Մեր դարպասին անհիմն կերպով նշանակեցին տասնմեկմետրանոց և, հաղթանակը նվիրեցին դաշտի տերերին: Պետք է նշել սակայն, որ այդ խաղը ցույց տվեց, որ մեր թիմը լավ է պատրաստված և կարող է լուրջ անակնկալներ մատուցել այդ առաջնությունում:

18/07-77թ., «Սպարտակ» Նախիջևան-«Ղարաբաղ»՝ 0:1: Նախիջևանի հետ խաղում մեր բոլոր տղաները փորագավ ունեցան և անընդհատ արտաքնոց էին գնում: Կամ մեր թիմին թունավորել էին կամ ճաշն անորակ էր:

Առաջին անգամ իմ կյանքում ես թույլ տվեցի, որ ֆուտբոլիստները խաղից առաջ երևանյան կոճակ խմեն՝ հիսունական գրամ: Այդ գործոնը բավականին օգնեց խաղին, և մենք կարևոր այդ խաղը շահեցինք:

21/07-77թ., «Մելերատոր» Իմիշլի-«Ղարաբաղ»՝ 1:2:

24/07-77թ., «Սուրախանեց» Բաքու-«Ղարաբաղ»՝ 0:2, գոլերը խփեցին Բ. Բաբայանը և Պ. Առաքելյանը:

25/07-77թ., «Սկիֆ» Բաքու-«Ղարաբաղ»՝ 2:2, գոլերը խփեցին Բ. Բաբայանը և Պ. Առաքելյանը:

18/06-77թ. Ստեփանակերտում ֆուտբոլի սեզոնի առաջնության բացումն էր: Այդ օրը «Ղարաբաղն» ընդունում էր «Մինգեչաուր» թիմին: Գրոշը բարձրացին «Ղարաբաղ» թիմի ավագ Միքայել Հայրիյանը և Մինգեչաուրից Ալահվերդիկը: Խաղն անցավ «Ղարաբաղ» թիմի բացարձակ առավելությամբ, որը և հաղթեց 6:0 խոշոր հաշվով: Գոլերը խփեցին Գագիկ Գալստյանը, Կառլեն Սիմոնյանը, Միքայել Հայրիյանը, տասնմեկմետրանոցներով՝ Վ. Հայրիյանը, Բ. Բաբայանը և Գագիկ Ծատրյանը: Լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել Կառլեն Սիմոնյանը, որը ստացել է ԼՂԻՄ կոմերիտմիության կողմից սահմանված պարգևը:

21/06-77թ., «Ղարաբաղ»-«Մետալուրգ» Կիրովաբադ՝ 3:0, գոլերը խփել է Վալերի Հայրիյանը: Լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել Վ. Հայրիյանը, որը ստացել է պրոֆմիության կողմից սահմանված պարգևը:

22/06-1977թ., «Ղարաբաղ»-«Փոլադ» Սումգայիթ՝ 2:0, գոլերը խփեցին Լեոնիդ Հովհաննիսյանը և Բենիամին Բաբայանը: Սպորտկոմիտեի նվերը ստացել է Ազիզ Ալիկը:

05/08-77թ., «Ղարաբաղ» - ԲՄԱ Բաքու՝ 4:0, գոլերը խփեցին Գագիկ Գալստյանը, Միքայել Հայրիյանը, տասնմեկմետրանոցից՝ Վ. Հայրիյանը, Բենիամին Բաբայանը:

15/08-77թ. «Ղարաբաղ»-«Ծիրագ» Բաքու՝ 3:0, գոլերը խփեցին Գագիկ Ծատրյանը, Վալերի Հայրիյանը և Կառլեն Սիմոնյանը:

Առաջին խաղաշրջանում լավագույն ֆուտբոլիստներ են ճանաչվել Միքայել Հայրիյանը, Սլավա Գաբրիելյանը, Լեոնիդ Հովհաննիսյանը, Ալբերտ Միրզոյանը, Գագիկ Գալստյանը, Վ. Հայրիյանը, Գագիկ Ծատրյանը, Բենիամին Բաբայանը, Ա. Ալիկը և ուրիշներ:

8/09-1977թ. երկրորդ խաղաշրջանի բացումը. «Մինգեչաուր»-«Ղարաբաղ»՝ 1:4, գոլերը խփեցին Վալերի Հայրիյանը (3), Գագիկ Ծատրյանը:

12/09-77թ., «Ղարաբաղ»-«Խազար» Լենքորան՝ 1:0, գոլը խփեց Ռազմիկ Պետրոսյանը (խաղացող մարզիչ): Այդ առաջնությունում, երբ դժվար խաղեր էին լինում, ապա եւ էլ էի խաղադաշտ մտնում:

16/09-77թ., «Ղարաբաղ»-«Մելերատոր» Իմիշլի՝ 2:0, գոլերը խփեցին Ս. Ծաբանյանը և Վ. Հայրիյանը: Պաշտպանների հիվանդության պատճառով պաշտպանությունում եւ էի խաղում:

20/09-77թ., «Ղարաբաղ»-«Սպարտակ» Նախիջևան՝ 7:0, գոլերը խփեցին Գագիկ Գալստյանը՝ 2, Վալերի Հայրիյանը՝ 2, Գագիկ Ծատրյանը՝ 2 և Կառլեն Սիմոնյանը՝ 1:

26/ 09-77թ., «Ղարաբաղ»-«Սուրախանեց» Բաքու՝ 4:0, գոլերը խփեցին Գագիկ Ծատրյանը՝ 2, Վալերի Հայրիյանը՝ 1 և Կառլեն Սիմոնյանը՝ 1: Լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել Լեոնիդ Հովհաննիսյանը:

27/09-77թ. «Ղարաբաղ»-«Սկիֆ» Բաքու՝ 4:1, գոլերը խփեցին Գագիկ Ծատրյանը՝ 2, Ռազմիկ Պետրոսյանը՝ 1, Կառլեն Սիմոնյանը՝ 1:

«Ղարաբաղ» թիմը խաղացել է 19 խաղ, որոնցից 14-ում հաղթել է, երկու խաղ ավարտվել է ոչ-ոքի, 3 խաղում պարտություն է կրել:

«Մետալուրգ» Կիրովաբադ-«Ղարաբաղ» Ստեփանակերտ՝ 0:1, գոլը խփեց Վալերի Հայրիյանը:

Այս խաղը մեծ նշանակություն ուներ կիրովաբադցիների համար, որովհետև Բաքվից գանգել էին քաղաքի ղեկավարությանը և հրահանգել ամեն զնով կասեցնել հայերի առաջընթացը: Խաղը սկսվել էր նրանց հարձակումով և ամբողջ խաղի ընթացքում մենք պաշտպանվում էինք ու հարմար պահերին հակազորոհներ ձեռնարկում:

Երկրորդ խաղակեսում մենք նախաձեռնությունը վերցրել էինք մեր ձեռքը և անընդհատ գրոհում էինք: Այդպիսի գրոհներից մեկի ժամանակ Վալերի Հայրիյանը բացեց հաշիվը: Հանդիսատեսները հայհոյում էին դատավորին և պահանջում տասնմեկմետրանոց հարված: Իսկ նրանց



«Ղարաբաղ-77» ֆուտբոլային թիմը Լենինգրադում:

ֆուտբոլիստները ոչ մի առիթ բաց չէին թողնում մեր տուգանային հրապարակում շարունակ ընկնում էին: Դատավորի նյարդերը վերջապես տեղի տվեցին և նա խաղի ավարտից հինգ րոպե առաջ տասնմեկմետրանոց հարված նշանակեց մեր դարպասին: Կիրովաբաղցիները չկարողացան իրացնել այդ տասնմեկմետրանոցը, և մենք գեղեցիկ հաղթանակ տոնեցինք՝ հնարավորություն ստանալով պայքարելու Ադրբեջանի ֆուտբոլի չեմպիոնի կոչման համար:

6/10-77թ., «Փոլադ» Մունգալիթ-«Ղարաբաղ»՝ 1:5, գոլերը խփեցին Ալբերտ Միրզոյանը, Գագիկ Ծատրյանը՝ 2, Վալերի Հայրիյանը, Բենիամին Բաբայանը: Թիմը 34 միավորով առաջին տեղում էր:

10/10-77թ., «Արագ» Բաքու-«Ղարաբաղ»՝ 0:1, գոլը խփեց Ռազմիկ Պետրոսյանը:

11/10-77թ., «ԲՄԱ» Բաքու-«Ղարաբաղ»՝ 1:2, գոլերի հեղինակ դարձավ Գագիկ Ծատրյանը:

18/10-77թ., «Ղարաբաղ»-«Ուզումչի»՝ Ջալիլաբադ

19/10-77թ. «Ղարաբաղ»-«Էներգետիկ» Ալի Բայրամլի՝ 3:0, գոլերը խփեցին Վալերի Հայրիյանը՝ 2, Բենիամին Բաբայանը՝ 1:



1978թ., Ստեփանակերտի Քաղսովետի նախագահ Հ. Ավանեսյանը գավաթը հանձնում է Լավագույն ֆուտբոլիստ Հովհաննես Զանազանյանին:

23/10-77թ., «Ղարաբաղ»-«Վիլյամ» Մասալը՝ 5:1, գոլերը խփեցին Վալերի Հայրիյանը, Ալ. Միրզոյանը, Կառլեն Սիմոնյանը, Ս. Ծաբանյանը, Գ. Ծատրյանը:

1977թ. ֆուտբոլի առաջնությունում իմ գլխավորած «Ղարաբաղ» թիմը վաստակել է 44 միավոր: Հաղթանակի համար տալիս էին 2 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1 միավոր, պարտության համար՝ 0 միավոր: Գնդակների հարաբերությունը՝ 69:12: Լավագույն ոմբարկուն էր Վալերի Հայրիյանը, որը խփել էր 28 գոլակ: Ամբողջ առաջնությունում իրենց գերազանց են դրսևորել Ազիզ Աիևը, Արմեն Հարությունյանը, Ալբերտ Միրզոյանը, Մյոմա Ծաբանյանը, Գագիկ Գալստյանը, Գագիկ Ծատրյանը, Կառլեն Սիմոնյանը, Բենիամին Բաբայանը, Վալերի Հայրիյանը, Վագիֆ Իշխանյանը, Պարգև Առաքելյանը, Վլադիմիր Ապրեսյանը, Սյոմա Ասրյանը և Վովա Հայրապետյանը:

Ահա թե ինչ է գրել Բաքվի «Կոմունիստ» թերթը 1977թ. հոկտեմբերի 16-ի համարում. «Երեկ Ջալիլաբադի ֆուտբոլիստներից շահելով երկու միավոր՝ Ստեփանակերտի «Ղարաբաղ» թիմը Ադրբեջանի ֆուտբոլի չեմպիոնատի ավարտից երկու տուր առաջ նվաճեց հանրապետության չեմպիոնի կոչումը: Երեսուն տարի է, ինչ Լեոնային Ղարաբաղի ներկայացուցիչները հանդես են գալիս հանրապետության առաջնություններում, սակայն առաջին անգամն է, որ նրանք այդպիսի խոշոր հաջողու-



1978թ., «Ղարաբաղ»-«Դինամո», Բաթումի:
 Զախից՝ Հովհաննես Զանազանյան, Լեոնիդ Հովհաննիսյան, Կատլեն Սիմոնյան:

թյան են հասնում, ընդ որում՝ ղարաբաղցիները խաղերի մեծամասնությամբ շահել են խոշոր հաշվով: Այդ հաղթանակին նրանք երեք տեսնյակ տարի է ինչ սպասում էին: Եվ վերջապես եկավ այդ բաղձալի օրը, որը համընկավ Մեծ Հոկտեմբերի վաթսուհինգամյա հոբելյանի հետ: Իհարկե, մինչև այդ էլ ԼՂԻՄ-ի ֆուտբոլիստները թոփաքներ են ունեցել: 1951թ. տիրել են Ադրբեջանի ֆուտբոլի առաջնության պատվավոր գավաթին, իսկ 1961-64թթ. հանրապետական մրցումներում համապատասխանաբար գրավել են երկրորդ և երրորդ մրցանակային տեղերը: Եվ ահա, առաջին անգամ նրանք դարձան չեմպիոններ: Դեռ անցյալ տարի ստեփանակերտցիները հավակնում էին մրցանակային տեղին, սակայն Բաքվի «Արազ», ԲՄԱ, «Սուրախանեց» ուժեղ թիմերից հետո նրանք գրավեցին չորրորդ պատվավոր տեղը: Ի դեպ, այս մրցաշրջանում մարզի ֆուտբոլիստները ինչպես իրենց դաշտում, այնպես էլ դրսում պարտության են մատնել վերոհիշյալ թիմերին: «Ղարաբաղ» թիմի ձևավորման և նրա ձեռք բերած հաջողություններում մեծ ծառայություն ունեն մարզի կուսակցական, արհմիութենական, կոմերիտական և սպորտային կազմակերպությունները: Թիմի հաջողությունը իրավամբ կիսում է նաև նրա խաղացող մարզիչ, Ստեփանակերտի բուժուսումնարանի դասախոս Ռազմիկ Արշակի Պետրոսյանը: Այդ անունը քաջ ծանոթ է մեր հանրապետությունում: 21 որ նա տարիներ առաջ հանդես է եկել Բաքվի «Վոստոկ» թիմի կազմում (Անդր-



ՍՍՀՄ օլիմպական ֆուտբոլի հավաքականը և «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմը ընկերական խաղից առաջ:

կովկասի օկրուգի թիմն է) և նվաճել Ադրբեջանի ֆուտբոլի գավաթն ու հանրապետության չեմպիոնի կոչումը, իսկ ՎՄԿ կոլեկտիվների գավաթի ֆինալիստն է: Մեր խնդրանքով մարզիչ Ռազմիկ Պետրոսյանը ընթերցողներին է ներկայացնում Ադրբեջանի նոր չեմպիոնին:

Ազիզ Ալիեվ՝ դարպասապահ:

Երբ նա դարպասում է, տղաները խաղում են վստահորեն՝ մեծ ուշադրություն դարձնելով գրոհներին:

Ալբերտ Միրզոյան՝ ձախ եզրային պաշտպան: Այս տասնվեցամյա պատանին թիմի ամենաերիտասարդ խաղացողն է: Չնայած իր տարիքին, նա ցուցադրում է գրագետ և հուսալի խաղ: Դրան մեծապես նպաստում է նրա ֆիզիկական լավ պատրաստվածությունը:

Միքայել Հայրիյան՝ կենտրոնական պաշտպան: Թիմի քսանչորսամյա վետերանը մոտ տասը տարի է ինչ վստահորեն պաշտպանում է Ղարաբաղի սպորտային պատիվը: Նա լավ օրինակ է ծառայում երիտասարդ ֆուտբոլիստներին: Մարզիչի առաջին օգնականն է... Պատահական չէ, որ կոլեկտիվը Միքայելին իր թիմապետն է ընտրել:

Սլավիկ Գաբրիելյան՝ «աջ եզրային պաշտպան»: «Ղարաբաղ»-ի պաշտպանական գծի ամենատեխնիկական և գրագետ խաղացողներից մեկն է: Լավ է կողմնորոշվում բարդ խաղադիրքում: Չնայած իր ոչ



«Ղարաբաղ», ՍՍՀՄ օլիմպիական հավաքականի խաղի սկիզբը: Զախից՝ Կառլեն Սիմոնյանը, Լեոնիդ Հովհաննիսյանը, Վազիֆ Իշխանյանը, Ալբերտ Սարգսյանը, Պարզե Առաքելյանը, Արտեմ Ժամհարյանը, Վիտալի Ծաֆերյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Ալբիկ Բաղդասարյանը շնորհավորում են Արտեմ Ժամհարյանի ծնունդը:

բարձր հասակին՝ խելացիորեն է խաղում գլխով, կարող է խաղալ նաև որպես կենտրոնական պաշտպան:

Լեոնիդ Հովհաննիսյան՝ ձախ եզրային պաշտպան և կիսապաշտպան: Արագավազ ֆուտբոլիստ է, խաղում է երկու ճակատներում՝ պաշտպանությունում և հարձակողական գծում: Նրա դիպուկ փոխանցումները մեկ անգամ չէ, որ ավարտվել են մրցակցի դարպասի գրավումով:

Սեսյուն Ծաբանյան՝ կիսապաշտպան: Հաճախակի է հաղթող դուրս եկել երկրորդ հարկում: Ավելի արդյունավետ կխաղա, եթե լուրջ ուշադրություն դարձնի իր ֆիզիկական պատրաստվածությանը, խաղում է գրագետ ֆուտբոլ:

Կառլեն Սիմոնյան՝ կիսապաշտպան: Ֆիզիկական տվյալները օգնույ են ամբողջ խաղի ընթացքում խաղալ լրիվ ծանրաբեռնվածությամբ: Կոշտ խաղացող է, ունի գեղեցիկ հարվածելու ունակություն: Ծատ է օգնում պաշտպանական գծին:

Սյունա Ասրյան՝ պաշտպան: Ծատ գրագետ խաղացող է: Հակառակորդին թույլ չի տալիս, որպեսզի գնդակն ընդունի: Կազմակերպում է



Առաջին աղջիկների ֆուտբոլային թիմը Ղարաբաղում, 1984թ.:

«ռեդեր» դեպի հարձակողական գիծը: Ծատ մեծ օգնություն է ցույց տալիս կիսապաշտպաններին:

Բենիկ Բաբայան՝ պաշտպան-կիսապաշտպան: Մեծ հեղինակություն է վայելում թիմում: Նա շատ աշխատասեր է: Թիմում գլխով ամենագեղեցիկ խաղացողն է: Ունի դարպասին գեղեցիկ հարվածելու հատկություն, մեկ անգամ չէ, որ գրավել է հակառակորդի դարպասը: Գծվար պահերին միշտ օգնության է գալիս խաղընկերներին:

Գագիկ Գալստյան՝ հարձակվող: Լավ է տիրապետում խաղային շատ հնարքների, ունի «դրիմբլինգ», որը հնարավորություն է տալիս հաճախ շրջանցել մրցակիցներին և ստեղծել գոլային պահեր: Աջ եզրային գոտուց գեղեցիկ փոխանցումներ է կատարում դեպի կենտրոն, որը հնարավորություն է տալիս գրավել հակառակորդի դարպասը:

Գագիկ Ծատրյան՝ հարձակվող: Քսաներկումնա ֆուտբոլիստը ցուցադրում է կայուն խաղ, կարող է տուգանային հրապարակում մի քանի հակառակորդի խաբել և գրավել դարպասը: Լավ հարվածներ է կատարում դեպի դարպասը՝ աջ և ձախ ոտքերով:

Վալերի Հայրիյան՝ հարձակվող: Մրցակցի տուգանային հրապարակի մատուցներում նրան դժվար է կանգնեցնել, և հաճախ նա հասնում է



Մոսկվայի ֆուտբոլասերները «Ղարաբաղ» թիմի ֆուտբոլիստների հետ, 1988թ.:

հաջողության: Պատահական չէ, որ Վալերին 1977թ. Ադրբեջանի ֆուտբոլի չեմպիոնատի լավագույն ութնյակում էր, խփել է ավելի քան 30 գնդակ:

Պարզև Առաքելյան՝ հարձակվող: Կենտրոնական հարձակվող է, առաջաշարժ է, կարողանում է շուտ ազատվել հակառակորդից: Եթե սպորտային ռեժիմը պահպաներ, կարող էր մեծ ֆուտբոլիստ դառնալ թիմի երկրորդ ութնյակում էր:

Վլադիմիր Ապրեսյան՝ հարձակվող: Իսկական եզրային հարձակվող է, կարող է մի քանի հակառակորդի շրջանցել և գնդակը փոխանցել դեպի կենտրոն: Շատ կարգապահ ֆուտբոլիստ է, ընկերների հետ միշտ լավ հարաբերությունների մեջ է:

Ես հաճախ եմ ականատես եղել ստեփանակերտցիների մասնակցությամբ անցկացվող խաղերին, ասում է հանրապետության սպորտկոմիտեի ֆուտբոլի բաժնի աշխատող Վալերի Արխիպովը: Եվ ամեն անգամ մենք հաճույք ենք ստանում «Ղարաբաղ»-ի ֆուտբոլիստների տեխնիկական և արդյունավետ խաղից: Նրանց հաջողություն:

Գլխավոր գաղտնիքը ոչ միայն աշխատասիրությունն է, այլ նաև պատասխանատվության բարձր զգացումը:

Այսօր, շնորհավորելով ստեփանակերտցիներին՝ հաղթանակի առթիվ, կարծում ենք, ինքնավար մարզի ֆուտբոլիստներն ամեն ինչ կանեն էլ ավելի կատարելագործելու իրենց վարպետությունը և հաջող հանդես գալու ԽՍՀՄ ֆուտբոլի երկրորդ լիգայի չեմպիոնատում, որին արդեն նրանք արժանացել են:

Հրաչիկ Սարոյան, թղթակից, ք. Բաքու»:

«Սովետական Ղարաբաղ» թերթում 1977թ. հոկտեմբերի 20-ին ահա թե ինչ է գրել տաղանդավոր գրող, բանաստեղծ, ֆուտբոլի մեկնաբան, ֆուտբոլի մեծ բարեկամ Վազգեն Օվյանը.

«ՂԱՐԱԲԱՂԸ» ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԵՄՊԻՈՆ

Իսկական և գեղեցիկ ֆուտբոլը պայմանավորված է մարզիկների տեխնիկայից հասուն և գրագետ խաղով, բարոյականային լավագույն հատկանիշների դրսևորումներով և նրանով, թե յուրաքանչյուր ֆուտբոլիստ ինչպես է անհատական խաղը զուգորդում կոլեկտիվ խաղին:

Ստեփանակերտի «Ղարաբաղ» թիմը հրեելյանական մրցաշրջանը սկսեց մի տեսակ հանգիստ ու խաղաղ, և երբ դրսի առաջին ութ հանդիպումներից թիմը վաստակեց ութ միավոր, զգացվում էր, որ մեր մարզիկները դեռևս չեն ասել իրենց խոսքը: Բեկումը տեղի ունեցավ չափազանց արագ և պողոթնումով: Թիմի ավագ մարզիչ Ռազմիկ Պետրոսյանը չանցավ տրորված ճանապարհով: Նա որոնեց ու գտավ երիտասարդ խաղացողներ՝ ուշադրություն դարձնելով յուրաքանչյուր խաղացողի լավագույն հատկանիշներին: Ռ. Պետրոսյանը ժամանակին խաղացել է Նովոռոսիյսկի «Ցեմենտ»-ի, Անդրկովկասի զինվորական օկրուգի հավաքականի կազմում, ինչպես նաև՝ Երևանի «Արարատ» թիմում: Նա երկար տարիներ հանդես է եկել մարզկենտրոնի «Ղարաբաղի» կազմում և իր վարպետ խաղով ուրախացրել է մեր ֆուտբոլասերներին:

Այս հրեելյանական տարում «Ղարաբաղը» իսկապես ցուցադրեց գեղեցիկ ֆուտբոլ: Մեր մարզիկները միշտ էլ խաղաղաշտ մտան հաղթելու կամքով, ձգտումով, ցանկությամբ և բերկրանքի շատ հանելի պահեր պարզևեցին իրենց երկրպագուներին: Բավական է թեկուզ այն փաստը, որ հանրապետության նոր չեմպիոնը 25 հանդիպումներից շահել է 20-ը, երկու խաղ ավարտել խաղաղ էլքով, կրել միայն երեք պարտություն: Այն, որ թիմն իր մրցակիցներին 10 անգամ հաղթել է խոշոր հաշվով,

խիել 69 և սեփական դարպասով բաց թողել 11 գդակ, շատ բան է ասում: Հայտնի բան է, ժամանակակից ֆուտբոլ ցուցադրելու համար դեռևս քիչ են ցանկությունն ու ձգտումը:

Մեր թիմի վերելքի գործում իր ներդրումն ունի նաև Ստեփանակերտի Ծահույանի անվան քաղաքային մարզադաշտի դիրեկտոր Գարի Բալայանը, որը ստեղծել է բոլոր հնարավոր պայմանները, ինչպես թիմի նախամարզումները, այնպես էլ պաշտոնական հանդիպումները բարձր մակարդակով անցկացնելու համար: Իսկ այժմ, ինչպես սովորաբար ընդունված է, առաջին խոսքը տանք «Ղարաբաղ» թիմի մարզիչ Ռ. Պետրոսյանին:

Ռ. Պետրոսյան - «Ղարաբաղը» նվաճեց հանրապետության չեմպիոնի կոչումը: Ինչ խոսք, դա մեծ հաջողություն է: Ամեն ինչում սկիզբն է միայն դժվար և, կարծում եմ, հետագայում մեր ֆուտբոլիստները էլ ավելի կբարձրացնեն իրենց վարպետությունն ու բարձր կպահեն մեր մարզի սպորտային պատիվը: Օգտվելով առիթից, ես ուզում եմ շնորհակալություն հայտնել մարզի հիմնարկ-ձեռնարկությունների կոլեկտիվներին և նրանց ղեկավարներին, որոնք բարոյապես աջակցել են մեր թիմին և ոգևորել մեզ մեծ հաղթանակներ տանելու: Դրանք են՝ Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի տնօրեն Ալբերտ Սեյրանյանը, «Ղարվին» տրեստի տնօրեն Հենրիկ Պողոսյանը, Գիճու գործարանի տնօրեն Յուրի Ավագիսյանը, կոշիկի ֆաբրիկան, թիվ 91 շինվարչությունը, գազի գրասենյակը, էլեկտրացանցի կոլեկտիվը և նրանց ղեկավարները:

Ազիզ Ալիև - Ամբողջ խաղաշրջանում ինձ էր վստահված «Ղարաբաղի» դարպասի պաշտպանությունը: Հայտնի բան է՝ պաշտպանի սխալը սխալ է, իսկ դարպասապահի սխալը՝ գոլ: Ես ձգտել եմ չսխալվել և եթե սխալվել եմ, ինչ-որ տեղ աշխատել եմ չկրկնել: Դարպասապահը այն մարդն է, որը կարողանում է տեսնել և զգալ իր խաղընկերներին: Ես գոհ եմ մեր թիմի պաշտպանների հաշվեհարկալի խաղից: Տղաները ձգտել են, որ ես քիչ խաղի մեջ մտնեմ: Այդ կարող է վկայել թիմի ավագ, կենտրոնական պաշտպան Միքայել Հայրիյանը:

Միքայել Հայրիյան - Պաշտպանները միշտ էլ վստահ են խաղում, երբ զգում են որ իրենց թիկունքում կանգնած է այնպիսի դարպասապահ, ինչպիսին է Ազիզը: Ինչպես թիմի ավագ, ես գոհ եմ իմ խաղընկերներից, բոլորն էլ լրիվ ծանրաբեռնվածությամբ մասնակցել են մարզումներին: Կարգապահությունը գտնվել է բարձր մակարդակի վրա, ամբողջ խաղաշրջանում թիմը ստացել է միայն մեկ նախազգուշացում: Հայտնի բան է, որտեղ կարգապահություն, այնտեղ էլ գեղեցիկ խաղ և գեղեցիկ հաղթանակ:

Ալբերտ Միրզոյան՝ պաշտպան - «Ղարաբաղ» թիմի կազմում հանդես եմ գալիս առաջին անգամ: Իմ առաջին գնդակը, որը անց եմ կացրել Սուվգալիթի «Փոլադի» դարպասով, միշտ պիտի մնա իմ հիշողության մեջ: Առաջին անգամ իմ կարծիքով ինձ լավ եմ դրսևորել Բաքվում, տեղի «Արագի» հետ խաղալիս: Ես իմ խաղընկերներից ամենակրտսերն եմ, տասնվեց տարեկան, և ահա իմ կյանքում առաջին անգամ դարձել եմ հանրապետական առաջնության չեմպիոն: Դա իմ սպորտային կենսագրության մեջ առաջին մեծ բերկրանքն է:

Սլավիկ Գաբրիելյան՝ կենտրոնական պաշտպան - Երրորդ տարին է, ինչ հանդես եմ գալիս «Ղարաբաղի» կազմում: Ֆուտբոլը կոլեկտիվ խաղ է, իսկ ես այդ կոլեկտիվի անդամն եմ: Ինձ միշտ ոգևորել է մեր թիմի մարտական տրամադրությունը և բարեկամական մթնոլորտը:

Լեոնիդ Հովհաննիսյան՝ ձախ եզրային պաշտպան - Ֆուտբոլը կոլեկտիվ ստեղծագործական խաղ է: «Ղարաբաղը» այս տարի խաղացել է այնպես, ինչպես երբեք: Իմ կարծիքով՝ այդպես էլ պետք է լինի, չէ՞ որ մեր փոքրիկ լեռնաշխարհի խաղողագործներն առաջին անգամ տվել են 100000 տոննա արևահամ խաղող: Եթե մեր հողագործներն այդպիսի հոյակապ ռեկորդ են սահմանել, ինչո՞ւ մենք էլ չսահմանենք մեր ռեկորդը:

Սյունա Ծաբանյան՝ կիսապաշտպան - Ես ուզում եմ հիշեցնել մեր անվանի մարզիչներից մեկի խոսքը՝ ասացեք, թե ովքեր են ձեր կիսապաշտպանները և ես կասեմ, թե ինչ է ներկայացնում իրենից ձեր թիմը: Այս տարի մեր թիմը իրենից ներկայացնում է մի կուռ ու համերաշխ կոլեկտիվ:

Գագիկ Գալստյան՝ ձախ եզրային հարձակվող - Մասնակցել եմ բոլոր հանդիպումներին և խիել եմ վեց գնդակ: Ինձ առանձնապես ոգևորել է այն, որ իմ փոխանցումներով իմ խաղընկերները գոլ են խփել: Ֆուտբոլը գեղեցիկ է, երբ թիմի բոլոր անդամները կարողանում են խաղալ գնդակով և առանց գնդակի, զգում, թե իրենց որ խաղընկերն է կանգնած հարմար դիրքում, կատարում արագ տեղաշարժեր ու ձեռնարկում գեղեցիկ կոմբինացիաներ:

Կառլեն Սիմոնյան՝ ձախ կիսապաշտպան - Հանրապետության չեմպիոնի կոչումը մեզ շատ բան է պարտավորեցնում: Վաղուց եմ հանդես գալիս մարզկենտրոնի թիմի կազմում: Ապրել եմ հաղթանակի բերկրանքն ու պարտության դառնությունը, սակայն միշտ էլ ձգտել եմ բարձր պահել մեր թիմի պատիվը: Այս տարվա բոլոր հանդիպումներից կուզեմ առանձնացնել մեր մրցավեճը Բաքվի «Արագի» հետ: Դա իսկապես մարտական անզիջում և բովանդակալից ֆուտբոլ էր, և մենք այն շահեցինք:

Գագիկ Ծատրյան՝ հարձակվող - Սիրում եմ կոմբինացիոն կարծես նախօրոք մշակված ու հղկված խաղերը: Հանելի է, երբ հարվածը կատարում ես ընթացքից և այն ավարտվում է գեղեցիկ գոլով: Իսկ մրցակիցներին պիտի հարգել: Երբ հակառակորդի պաշտպանը գնդակը ինձնի խլում է սպորտային կոռեկտ պայքարում, հարգում եմ նրա հաղթանակը Խփել եմ տասը գոլ: Կարծում եմ՝ դա անքան էլ շատ չէ, չնայած հանդես եմ եկել քսանչորս խաղում: Ուրախ եմ, որ իմ թիմը այս տարի առաջին անգամ նվաճեց հանրապետության առաջնության չեմպիոնի կոչումը:

Բենիկ Բաբայան՝ կենտրոնական կիսապաշտպան - Կիսապաշտպան ստելով՝ ես հասկանում եմ տեխնիկապես և տակտիկապես պատրաստ ֆուտբոլիստ: Դեռ ավելին, դրան պիտի ավելացնել ֆիզիկական պատրաստվածությունը: Կարևորը ոչ թե գոլ խփելն է, այլ խաղադաշտը տեսնելը, ժամանակին հարձակվողին կրակագիծ դուրս բերելը: Գեղեցիկ է այն փաստը, որ հանրապետության առաջնությունում մեր թիմը խփել է ամենից շատ գնդակներ և թիմի կենտրոնական հարձակվող Վալերի Հայրիյանը դարձել է երեսուց գոլի հեղինակ:

Վալերի Հայրիյան՝ կենտրոնական հարձակվող - Ծիշտն ասած, չեմ հաշվել, թե քանի անգամ եմ գրավել մրցակիցների դարպասը: Եթե բոլոր հարվածները ավարտվեին գոլով և բոլոր հարձակվողներն ընդհանրապես չվրիպեին, իմ կարծիքով՝ ֆուտբոլը կկորցներ իր հմայքը: Ինձ հաճախ հարցնում են. Ինչո՞ւ բոլոր հանդիպումների ժամանակ չես կատարում սրընթաց ճեղքումներ, նույնիսկ հանրահռչակ Պելեն այդ հարցին կպատասխաներ այսպես՝ ամենալավագույն հարձակվողի դիմա, միշտ էլ կանգնած է ամենալավագույն պաշտպանը:

Վագիֆ Իշխանյան՝ կիսապաշտպան - Հանդես եմ եկել տասնչորս խաղում: Իմ կարծիքով՝ մեր ամենալավագույն խաղը Բաբվի «Սուրախանեցի» հետ էր, որը մենք շահեցինք 2:0 հաշվով:

Արմեն Հարությունյան՝ դարպասապահ - Հոբելյանական տարում մեր թիմի կազմում հանդես եմ եկել միայն մեկ անգամ: Կաշխատեմ բարձրացնել իմ վարպետությունը:

Պարգե Առաքելյան՝ հարձակվող. Կենտրոնական հարձակվող է, արագաշարժ է, կարողանում է շուտ ազատվել հակառակորդից: Եթե սպորտային ռեժիմը պահպանեք, կարող եք մեծ ֆուտբոլիստ դառնալ թիմի երկրորդ ումբարկուն էր:

Վլադիմիր Ապրեսյան՝ հարձակվող. իսկական եզրային հարձակվող է, կարող է մի քանի հակառակորդի շրջանցել և գնդակը փոխանցել դեպի կենտրոն: Ծատ կարգապահ ֆուտբոլիստ է, ընկերների հետ միշտ լավ հարաբերությունների մեջ է»:

1977թ. բոլոր խաղերը, լինի ընկերական թե օրացույցային, մենք գնում էինք «Իկարուս» ավտոմեքենայով, ֆուտբոլի մեծ սիրահարներ և «Ղարաբաղ» թիմին նվիրված վարորդներով: Դրանք են՝ Էդիկ Շումանյանը և Ալբերտ Գրիգորյանը (Աչկոմը): Նրանք ամեն ինչ անում էին, որպեսզի տղաները և լավ հանգստանան մեքենայում, և ժամանակին տեղ հասնեն: Եվ ամենագլխավորը՝ երբ մենք առաջին տեղում էինք, Զեյնալի տղա Ժորիկ Բարսեղյանը խոսք էր տվել ինձ. «Ռազմիկ, եթե դուք չեմպիոն դառնաք, ես ձեր թիմին հյուրասիրելու եմ դադար մսի կուրկուտով և խաչենի թարմ ձկան խաշլամայով»: Նա իր խոստումը կատարեց և հյուրասիրության վերջում ասաց, որ այդ դազերը գողացված էին:

Ի պատիվ Ադրբեջանի չեմպիոնի, ԼՂ արհմիությունը Սերգեյ Գավթյանի ղեկավարությամբ մեզ նվիրեց հանգստի ուղեգիր՝ դեպի Լենինգրադ: Մենք մեծ սիրով հանգստացանք և լրջորեն նախապատրաստվեցինք 1978թ. առաջնությանը:

Ես լավ հասկանում էի, որ մեզ 1978թ. II լիգայի թիմ են տալու և, ուզես-չուզես, պետք է ուրիշ տեղից ֆուտբոլիստներ հրավիրեին: Դրա համար 1978թ. ձմռանը Ղարաբաղում որքան ֆուտբոլիստներ կան, ովքեր կարող են խաղալ II լիգայում, հրավիրեցի և կազմակերպեցի ձմեռային հավաք: Իմ նպատակը մեկն էր. որքան հնարավոր է՝ կարողանում տեղացի ֆուտբոլիստներ նախապատրաստեմ 1978թ. խաղաշրջանին:

Ես նաև գիտեի, որ կարող եմ դրսից մարզիկ հրավիրել, իսկ դրա համար անպայման պիտի ապավինեի մարզկոմն առաջին քարտուղար Բորիս Կևորկովի օգնությանը: Իսկ մարզի կուսակցության առաջին քարտուղարը և՛ ֆուտբոլասեր էր, և՛ ուզում էր անպայման ինտերնացիոնալ թիմ ստեղծել՝ այստեղ հրավիրելով թե՛ ռուսների, և թե՛ ադրբեջանցիների կամ այլազգի խաղացողների:

Ես դեմ չէի, որ ինտերնացիոնալ թիմ լինեք Ղարաբաղում, բայց եթե դու հրավիրում ես ադրբեջանցի կամ ռուս, ուրեմն՝ այդ ֆուտբոլիստները պետք է վարպետությամբ առնվազն մի գլուխ բարձր լինեին տեղական ֆուտբոլիստներից:

Դրա համար, երբ 1967թ. զարգացնում էինք ֆուտբոլը և դուրս գալիս համամիութենական խաղերի, մարզի ղեկավարները մարզիչներին դրսից էին հրավիրում: Վերջիններս էլ ինտերնացիոնալ թիմ են հավաքում, մի սեզոն խաղում՝ այն էլ մեծ ծախսերով, իսկ սեզոնի վերջում մարզի ղեկավարները նրանց ազատում են աշխատանքից և ինձ առաջարկում աշխատելու թիմում: Ես էլ, ընդունելով թիմը, որքան վատ խաղացող կա դրսից հրավիրված, հանում էի և նրանց տեղը համալրում տեղացի լավ ֆուտբոլիստներով, որոնք ավելի լավ էին խաղում, և լրացուցիչ ծախսեր

չէր պահանջվում: Այդպես է եղել 1969 թվականին, 1972 և 1982 թվականներին:

1982թ. վերջին Հենրիկ Պողոսյանը ինձ հրավիրեց իր մոտ և ասաց, թե Կևորկովին համոզել ենք, որ քեզ նշանակեն ավագ մարզիչ, բայց մի պայմանով, որ ադրբեջանցիներն էլ պետք է խաղան թիմում: Ես դեմ չէի, որ նրանք խաղան մեր թիմում, բայց ասացի՝ եթե այդ ադրբեջանցին բոլոր առումներով զիջի տեղացի ֆուտբոլիստին, ես անպայման նախապատվությունը կտամ տեղական ֆուտբոլիստին:

Այդպես էլ պայմանավորվեցինք, բայց երբ 1983թ. գարնանը մարզկոմի առաջին քարտուղար Կևորկովը ֆուտբոլիստների ցուցակը պահանջեց՝ ծանոթանալու, տեսավ, որ ցուցակում ընդամենը 1 ադրբեջանցի է մնացել, Հենրիկ Պողոսյանին ասաց՝ ինձ վրա հույս չդնես, որ ես թիմին օգնեմ: Դու պետք է ամեն ինչ անես, որ նրանք լավ ֆուտբոլ խաղան:

Հ. Պողոսյանը կանչեց ինձ ու ասաց, որ ինքը ամեն ինչ կանի, որպեսզի թիմին օգնի: Իսկ իմ նպատակն էլ այն էր, որ երկրորդ լիգայում հանդես եկող բոլոր ադրբեջանական թիմերից առաջ անցնենք, ու և այդպես էլ եղավ:

Ներկայացնում եմ 1983թ.մեր թիմի կազմը.

1. Պետրոսյան Միշիկ
2. Գրիգորյան Իվան
3. Գաբրիելյան Սլավիկ
4. Սողոմոնյան Դավիթ
5. Գասպարյան Արարատ
6. Ադամյան Արսեն
7. Հայրիյան Վալերի
8. Սողոմոնյան Արմեն
9. Գրիգորյան Վիգեն
10. Առուստամյան Արսեն
11. Բալասանով Արտեմ
12. Աղաբեկյան Արտուր
13. Հակոբյան Արկադիա
14. Մանվելով Վալերի
15. Գաբրիելյան Սերգեյ
16. Աղաջանյան Սարգիս
17. Հարությունյան Սամվել
18. Հովհաննիսյան Լեոնիդ
19. Աթայան Գարուն



20. Բաբայան Բենիամին
21. Միրզոյան Ալբերտ
22. Բաբայան Վարուժան
23. Հակոբյան Ռաֆայել
24. Սարկիսով Արտուր
25. Զավադյան Վարդան

Թիմի պետ՝	Վիտալի Ծաֆերյան
Ավագ մարզիչ՝	Ռազմիկ Պետրոսյան
Ադմինիստրատոր՝	Վլադիմիր Մեսրոպյան
Բժիշկ՝	Վլադիմիր Հայրիյան

1978թ. ինձ կանչեցին մարզկոմ և առաջարկեցին, որ մեկնեմ Երևան և մեր թիմում խաղալու համար հրվիրեմ 1973թ. ԽՍՀՄ չեմպիոն և գավաթակիր Հովհաննես Զանազանյանին ու Սուրեն Մարտիրոսյանին: Ես գնացի Երևան և հրավիրեցի Հովհաննեսին: Նա սիրով ընդունեց իմ առաջարկն ու ասաց. «Մի բան եմ խնդրում. եթե հնարավորություն լինի, օգնեն իմ միջոցներով «Վոլգա» ավտոմեքենա ձեռք բերել...»: Այդ առաջարկը սիրով ընդունեցինք:

Ես շատ ուրախ էի, որ թիմում ընդգրկված մեծամասնությունն իմ սաներն էին:

Ահա թիմի կազմը՝ Վլադիմիր Պետրոսյան, Ազիզ Ալին, Էդուարդ Բաղդասարյան, Ալբերտ Միրզոյան, Սլավա Գաբրիելյան, Սուրեն Մարտիրոսյան, Լեոնիդ Հովհաննիսյան, Բենիամին Բաբայան, Կառլեն Սիմոնյան, Գագիկ Ծատուրյան, Վալերի Սիմոնյան, Ռոբերտ Հարությունյան, Հովհաննես Զանազանյան, Վալերի Հայրիյան, Մաքսիմ Խաչատրյան, Վալերի Մուրադյան, Գարուն Աթայան, Նադիր Ասկերով, Մուշեղ Հավհաննիսյան, Վարուժան Բաբայան, Արտեմ Բալասանով, Վլաչեսլավ Ազարյան:

Ավագ մարզիչ՝ Ալեքսանդր Տրոֆիմով:

1978թ. վերջնական աղյուսակը

	խ	հ	ո	պ	գնդակ.	միավոր.
1. Զվեգդա (Պերմ)	46	25	10	11	73:	42 60
2. Գուրիա (Լանչխուտի)	46	24	11	11	81:	42 59
3. Դինամո (Զուգդիսի)	46	21	11	14	64:	44 53



4. Ծիրակ (Լեւնիանական)	46	19	15	12	73:	45	53
5. Տորպեդո (Տոլյատի)	46	22	8	16	53:	42	52
6. Ռուբին (Կազան)	46	20	12	14	64:	54	52
7. Կոտայք (Առբվյան)	46	23	5	18	64:	62	51
8. Լոկոմոտիվ (Սամտրեդիա)	46	21	8	17	75:	72	50
9. Դիլա (Գորի)	46	18	14	14	59:	53	50
10. Դրուժբա (Յոշկար Օլա)	46	22	5	19	59:	54	49
11. Ավտոմոբիլիստ (Բաքու)	46	20	9	17	60:	60	49
12. Զեմիթ (Իժևսկ)	46	16	17	13	67:	53	49
13. Դինամո (Բաթումի)	46	18	12	16	60:	46	48
14. Տուրքինա (Տազանոոգ)	46	21	5	20	52:	63	47
15. Ղարաբաղ (Ստեփանակերտ)	46	19	9	18	55:	46	47
16. Գազովիկ (Աստրախան)	46	17	10	19	56:	44	44
17. Դինամո (Կիրով)	46	17	9	20	55:	46	43
18. Դինամո (Սոխումի)	46	15	12	19	61:	66	42
19. Ուրալեց)	46	16	8	22	57:	69	40
20. Գաստելլո)	46	15	9	22	48:	58	39
21. Ֆիմա)	46	12	15	19	38:	49	39
22. Խազար (Լենքորան)	46	14	8	24	44:	75	36
23. Պրոգրես (Կիրովաբադ)	46	13	3	30	45:	97	29
24. Արազ (Նախիջևան)	46	9	5	32	38:	111	23

1979 թիվ

Թիմի կազմը. Էդուարդ Բաղդասարյան, Վլադիմիր Պետրոսյան, Սլավա Գաբրիելյան, Միքայել Առաքելյան, Սուրեն Մարտիրոսյան, Լեոնիդ Հովհաննիսյան, Բենիամին Բաբայան, Պողոս Գալստյան, Գարուն Աթայան, Գագիկ Ծատրյան, Լևոն Ամիրջանյան, Ալեքսանդր Միկուչանյան, Վիդադի Միրզոև, Վալերի Հայրիյան, Արմեն Սողոմոնյան, Սարգիս Պետրոսյան, Յունիս Բախտև, Արկադի Հակոբյան, Հովհաննես Զանգազանյան, Ալբերտ Միրզոյան:

Թիմի պետ՝ Ալբերտ Գրիգորյան
 Թիմի ադմինստրատոր՝ Ռազմիկ Ստեփանյան
 Թիմի ավագ մարզիչ՝ Ալի Աբիլզադե

1979թ. վերջնական աղյուսակը

	խ	ն	ո	պ	զնդակ.	միավոր.
1. Գորիա (Լանջխութի)	46	31	4	11	110:	50 66
2. Լոկոմոտիվ (Սամտրեդիա)	46	28	9	9	109:	49 65
3. Ղարաբաղ (Ստեփանակերտ)	46	29	5	12	65:	38 63
4. Զեմիթ (Իժևսկ)	46	23	13	10	70:	42 59
5. Կոտայք (Առբվյան)	46	26	6	14	83:	43 58
6. Արազ (Նախիջևան)	46	26	3	17	88:	78 55
7. Դինամո (Զուգդիդի)	46	21	10	15	53:	45 52
8. Դինամո (Սոխումի)	46	18	16	12	49:	39 52
9. Դիլա (Գորի)	46	21	8	17	74:	65 50
10. Կախեթի (Փոթի)	46	22	5	19	72:	55 49
11. Ծիրակ (Լեւնիանական)	46	20	7	19	54:	46 47
12. Գազովիկ (Աստրախան)	46	19	9	18	58:	66 47
13. Գաստելլո	46	17	10	19	42:	47 44
14. Խազար (Լենքորան)	46	19	5	22	54:	72 43
15. Դինամո (Բաթումի)	46	19	5	22	53:	65 43
16. Ավտոմոբիլիստ (Բաքու)	46	19	9	20	54:	65 43
17. Տուրքինա (Տազանոոգ)	46	16	10	20	58:	62 42
18. Ուրալեց	46	13	10	23	45:	59 36
19. Ռուբին (Կազան)	46	9	16	21	77:	66 34
20. Պրոգրես (Կիրովաբադ)	46	13	7	26	56:	86 33
21. Դրուժբա (Յոշկար Օլա)	46	13	5	28	44:	73 31
22. Դինամո (Կիրով)	46	12	7	27	39:	66 31
23. Արաբկիր (Երևան)	46	10	11	25	55:	101 31
24. Տորպեդո (Տոլյատի)	46	10	8	28	53:	86 28

Թիմի կազմի 12 խաղացողներ իմ նախկին սաներն են, որոնք հասնախմբվելով Հովհաննես Զանգազանյանի և Սուրեն Մարտիրոսյանի շուրջ, կարողացան իրենց գերազանց դրսևորել այդ մրցաշրջանում և արժանիորեն գրավեցին III մրցանակային տեղը:

1980 թիվ

Թիմի կազմը. Էդուարդ Բաղդասարյան, Վլադիմիր Պետրոսյան, Գարուն Աթայան, Գագիկ Հովհաննիսյան, Սուրեն Մարտիրոսյան, Գ. Օրոջև, Գագիկ Ծատրյան, Բենիամին Բաբայան, Պողոս Գալստյան,

Սարգիս Պետրոսյան, Արմեն Սողոմոնյան, Արկադի Հակոբյան, Վրեժ Հայրապետյան, Ալեքսանդր Միկուչաձե, Վալերի Հայրիյան, Լեոնիդ Հովհաննիսյան, Գարիկ Գագիսով, Սլավա Գաբրիելյան, Ֆրոլով, Բլեյան, Խաչատրյան:

Ավագ մարզիչ Ա. Աբիլզադե

1980 թվականին թիմը գրավել է II-րդ տեղը:

1981 թիվ

Թիմի կազմը. Վլադիմիր Պետրոսյան, Անդրեև, Գարուն Աթայան, Գագիկ Հովհաննիսյան, Լեոնիդ Հովհաննիսյան, Սլավա Գաբրիելյան, Ալմետով, Ժանդարմով, Միրզախանյան, Բենիամին Բաբայան, Ալեքսանդր Միկուչաձե, Արկադի Հակոբյան, Պողոս Գալստյան, Գ. Աբրամով, Կուրբանով, Արմեն Սողոմոնյան, Գրիգորի Առաքելյան, Պավել Աղաջանյան, Մորոզ, Վալերի Հայրիյան:

Ավագ մարզիչ՝ Ա. Աբիլզադե

1981թ. ամփոփիչ աղյուսակը

	խ	ն	ո	պ	զ	գ	ն	դ	ա	կ	ն	դ
1. Կոտայք (Առբվյան)	30	20	7	3	55:	23	47					
2. Լոկոմոտիվ (Սամսրեդիա)	30	17	9	4	54:	25	43					
3. Խազար (Լենքորան)	30	14	7	9	59:	39	35					
4. Ղարաբաղ (Ստեփանակերտ)	30	13	9	8	48:	37	35					
5. Դինամո (Սուխումի)	30	13	8	9	50:	35	34					
6. Սպարտակ (Հոկտեմբերյան)	30	15	3	12	53:	41	33					
7. Կոլխոզչի (Աշխաբադ)	30	15	3	12	44:	36	33					
8. Ծիրակ (Լենինական)	30	14	5	11	47:	34	33					
9. Դինամո (Բաթումի)	30	15	2	13	32:	32	32					
10. Լոկոմոտիվ (Թբիլիսի)	30	12	5	13	33:	34	29					
11. Կախեթի (Փոթի)	30	10	7	13	35:	37	27					
12. Դիլա (Գորի)	30	10	6	14	45:	57	26					
13. Արագ (Նախիջևան)	30	7	7	16	21:	41	21					
14. Մետալուրգ (Ռուսթավի)	30	7	5	18	22:	53	19					
15. Պրոգրես (Կիրովաբադ)	30	5	8	17	29:	70	18					
16. Ավտոմոբիլիստ (Բաքու)	30	5	5	20	30:	63	15					

1982 թիվ

Թիմի կազմը. Վլադիմիր Պետրոսյան, Տ. Կրամարենկո, Մորոզ, Գարուն Աթայան, Արմեն Սողոմոնյան, Բախմալով, Բենիամին Բաբայան, Ալեքսանդր Միկուչաձե, Վալերի Հայրիյան, Սլավա Գաբրիելյան, Վիգեն Գրիգորյան, Պավել Աղաջանյան, Արթուր Ապրեսյան, Գրիգորի Առաքելյան, Վարուժան Բաբայան, Լեոնիդ Հովհաննիսյան:

Ավագ մարզիչ՝ Ա. Աբիլզադե

Մարզիչ՝ Գագիկ Ծատրյան

Լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել Վարուժան Բաբայանը:

1984 թիվ

Ավագ մարզիչ՝ Ալիկ Մկրտիչև
Թիմի պետ՝ Ալեքսեյ Բալայան

Թիմի կազմը. Վլադիմիր Պետրոսյան, Իվան Գրիգորյան, Գրիգորի Առաքելյան, Վալերի Հայրիյան, Արկադի Հակոբյան, Բենիամին Բաբայան, Արթուր Աղաբեկյան, Վիգեն Գրիգորյան, Արսեն Աղամյան, Վարուժան Բաբայան, Ասրյան Նովրուզով, Արմեն Սողոմոնյան, Գասպարյան, Գարուն Աթայան, Գ. Սողոմոնյան, Լեոնիդ Հովհաննիսյան, Բախմալով, Սլավա Գաբրիելյան, Յարբախով:

1985 թիվ

Ավագ մարզիչ՝ Ալիկ Մկրտիչև
Մարզիչ՝ Գագիկ Ծատրյան
Թիմի պետ՝ Ալեքսեյ Բալայան

Թիմի կազմը. Վլադիմիր Պետրոսյան, Ս. Գրիգորյան, Միրզախանյան, Գ. Խուրոյան, Գարուն Աթայան, Սլավա Գաբրիելյան, Վարուժան Բաբայան, Վալերի Հայրիյան, Արկադի Հակոբյան, Ա. Գասպարյան, Գ. Առաքելյան, Է. Խաչատրյան, Ս. Մկրտիչև, Արսեն Աղամյան, Արմեն Սողոմոնյան, Արմեն Աղամյան, Ժան Ապրեսյան, Պողոս Գալստյան, Սերգեյ Գաբրիելյան, Պատվականյան, Աղաջանյան:

«Ղարաբաղ» ֆուտբոլային թիմը 1985թ. մրցաշրջանում մասնակցել է 30 խաղի և գրավել է 5-րդ տեղը՝ 17 հաղթանակ, 2 ոչ-ոքի, 11 պարտություն: 52 գնդակ խփել է և 41-ը բաց թողել:

1985 թիվ

Ստեփանակերտի պատանի ֆուտբոլիստները մասնակցել են Պյատիգորսկում կազմակերպված մրցաշարին:

Ստեփանակերտ - Կրասնոդար	1: 2
Ստեփանակերտ - Գրոզնի	3: 0
Ստեփանակերտ - Սոչի	1: 1
Ստեփանակերտ - Ստավրոպոլ	3: 2

Թիմը գրավել է 3-րդ տեղը և ստացել «Ամենատեխնիկական թիմ» մրցանակը: Մարզիչն էր Յուրի Ավագյանը:

1986 թիվ

Ավագ մարզիչ՝ Ալիկ Մկրտիչև
Մարզիչ՝ Լեոնիդ Հովհաննեսյան
Թիմի պետ՝ Ալեքսեյ Բալայան

Թիմի կազմը. Վլադիմիր Պետրոսյան, Ս. Գրիգորյան, Գարուն Աթայան, Սլավա Գաբրիելյան, Ա. Միրզախանյան, Է. Խաչատրյան, Ա. Աղաջանյան, Արմեն Սողոմոնյան, Գ. Առաքելյան, Դ. Սողոմոնյան, Վալերի Հալիբյան, Ա. Աղաբեկյան, Ս. Ալեքսեյրով, Ա. Ադամյան, Արկադի Հակոբյան, Ժան Ապրեսյան, Վարուժան Բաբայան:

1986թ. Ստեփանակերտի «Սպարտակ» պատանիների թիմը (մարզիչ՝ Էդուարդ Բաղդասարյան) Մինսկում մասնակցել է համամիութենական մրցաշարին: «Սպարտակ» Ստեփանակերտ-ԲԿՑԱ 2:1, «Սպարտակ» Ստեփանակերտ-«Կերչ» 3:0, «Սպարտակ» Ստեփանակերտ-«Մինսկ I» - 5:1, «Սպարտակ» Ստեփանակերտ-«Բրեստ» 2:1, «Սպարտակ» Ստեփանակերտ-«Մինսկ II» - 2:2:

1987 թիվ

Ավագ մարզիչ՝ Ալիկ Մկրտիչև
Մարզիչ՝ Լեոնիդ Հովհաննեսյան
Թիմի պետ՝ Ալեքսեյ Բալայան

Թիմի կազմը. Վլադիմիր Պետրոսյան, Ի. Գրիգորյան, Աբդուլան, Գ. Առաքելյան, Վ. Աղաջանյան, Վարուժան Բաբայան, Ս. Աղաջանյան, Է. Խաչատրյան, Ժան Ապրեսյան, Արմեն Սողոմոնյան, Դ. Սողոմոնյան, Գ. Պողոսյան, Անդրեև, Արսեն Ադամյան, Սլավա Գաբրիելյան, Արտաշես Ադամյան, Արտուր Ղահրամանյան, Ս. Խաչատրյան, Կ. Արշակյան, Ա. Միրզախանյան:

16 թիմերի մեջ մեր ֆուտբոլիստները գրավել են 13-րդ տեղը (12 հաղթանակ, 3 ոչ-ոքի, 15 պարտություն, գնդակների հարաբերությունը՝ 34:47, 27 միավոր):

1988 թիվ

Ավագ մարզիչ՝ Գագիկ Ծատրյան
Մարզիչ՝ Լեոնիդ Հովհաննեսյան
Թիմի պետ՝ Ալեքսեյ Բալայան

Թիմի կազմը. Վլ. Պետրոսյան, Էդ. Դանիելյան, Գ. Հովհաննեսյան, Արսեն, Արմոն, Արտաշես Ադամյաններ, Ա. Հակոբյան, Վ. Հալիբյան, Վ. Բաբայան, Վ. Գրիգորյան, Ս. Գաբրիելյան, Ս. Աղաջանյան, Ա. Ղահրամանյան, Գ. Առաքելյան, Ա. Միրզախանյան, Ղազարյան, Ալ. Գաբրիելյան, Ա. Սողոմոնյան, Ժ. Ապրեսյան, Լոբյան, Կ. Սիմոնյան:

Ղարաբաղ թիմը հանդես է եկել Ռուսաստանի ֆեդերացիայի առաջնության առաջին գոտում, որտեղ ընդգրկված են եղել 20 թիմ, գրավել է 11-րդ տեղը (17 հաղթանակ, 6 ոչ ոքի, 15 պարտություն: Գնդակների հարաբերությունը՝ 44:38):

1989 թիվ

Ավագ մարզիչ՝ Բենիամին Բաբայան
Մարզիչ՝ Լեոնիդ Հովհաննեսյան
Թիմի պետ՝ Կոնստանտին Բաղալյան

Թիմի կազմը. Է. Դանիելյան, Ի. Գրիգորյան, Ա. Միրզախանյան, Ս. Գաբրիելյան, Վ. Բաբայան, Ժ. Ապրեսյան, Ս. Աղաջանյան, Գ. Առաքելյան, Գ. Հովհաննեսյան, Արսեն, Արտուր Ադամյաններ, Ա. Հակոբյան, Պ. Աղաջանյան, Մանուկյան, Ս. Գաբրիելյան, Հարությունյան, Գ. Ղուկասյան, Ա. Սողոմոնյան, Բեգլարյան, Ա. Հայրապետյան:

Թիմը հանդես է եկել «Արցախ» անվամբ: Մրցաշարային բոլոր խաղերին չեն կարողացել մասնակցել, որովհետև սկսվել էր Արցախի ազատագրական պայքարը և թիմերը չէին կարողանում հասնել Ղարաբաղ:

Առաջին միջազգային հանդիպումը «Արցախը» անց է կացրել Սիրիայի ՀՄՄ թիմի հետ և հաղթել 4:2 հաշվով, գնդակները խփել են՝ Ս. Գաբրիելյանը, Վ. Հայրիյանը, Գ. Հովհաննիսյանը և Ա. Ադամյանը:

«Արցախը» Սիրիայում անց է կացրել մի շարք հանդիպումներ:
19.12. 89թ. «Իթայաթ» - «Արցախ»՝ 0:1, գնդակը խփել է Արկադի Հակոբյանը:

21.12. 89թ. «Հայկական սպորտային ակում» - «Արցախ»՝ 1:1, գնդակը խփել է Վ. Հայրիյանը:

24.12. 89թ. «Վասպուրական» - «Արցախ»՝ 1:2, գնդակները խփել է Ա. Հակոբյանը:

26.12. 89թ. «Իթայաթ» - «Արցախ»՝ 1:1, գնդակը խփել է Ա. Հակոբյանը:

28.12. 89թ. Սիրիայի երիտասարդական հավաքական - «Արցախ»՝ 2:0:

1990 թիվ

Ավագ մարզիչ՝ Բենիամին Բաբայան
Մարզիչ՝ Լեոնիդ Հովհաննիսյան

Թիմի կազմը. Ի. Գրիգորյան, Ս. Հարությունյան, Զ. Խաչատրյան, Վ. Հայրիյան, Ա. Հակոբյան, Գրիգորյան, Ա. Ադամյան, Գ. Առաքելյան, Ս. Գաբրիելյան, Վ. Բաբայան, Ա. Սողոմոնյան, Ղարախանյան, Գ. Հովհաննիսյան, Գ. Ղահրամանյան, Ա. Արզումանյան, Ա. Ադամյան:

«Արցախ» թիմը ընկերական հանդիպում է անցկացրել Մալիում:
«Ռեալ» Մալի - «Արցախ»՝ 1:3, բոլոր երեք գնդակները խփել է Ա. Հակոբյանը:

Մալիի հավաքական - «Արցախ»՝ 1:1, գնդակը խփել է Արսեն Ադամյանը:

1980 թվականներից սկսած պարապում էի նաև վեստերան ֆուտբոլիստների հետ: Դրանք 35 տարեկանից բարձր ֆուտբոլիստներն էին:

Այդ ֆուտբոլիստները նույնպես պատանի ժամանակ ինձ մոտ էին պարապում և շաբաթը 2 անգամ՝ երեքշաբթի և հինգշաբթի օրերին, պարապմունքներ էինք անցկացնում մարզահրապարակում: Եվ պետք է ասել, որ այդ թիմը իսկական պրոֆեսիոնալ ֆուտբոլիստներից էր կազմված, մասնակցում էին տարբեր մրցումների, այդ թվում նաև Հայաստանի առաջնությանը: Անց ենք կացրել մի շարք ընկերական հանդիպումներ ԽՍՀՄ Օլիմպիական հավաքականի, Բաքվի «Նևթջիի», Երեվանի «Արարատի», Թբիլիսիի «Դինամոյի», Անգլիայի «Լիվերպուլի» և այլ թիմերի հետ:

Ներկայացնում եմ մի քանի դրվագ Ղարաբաղ ֆուտբոլային թիմի կյանքից:

1980 թվականին Ղարաբաղ էին ժամանել ԽՍՀՄ Օլիմպիական հավաքականի ֆուտբոլիստները՝ Սերգեյ Սալնիկովի ղեկավարությամբ: Նրանք առաջին խաղն խաղացին «Ղարաբաղ» թիմի հիմնական կազմի հետ: Խաղն ավարտվեց 1:1 հաշվով: Հաջորդ խաղը նրանք անցկացրին «Ղարաբաղ» թիմի վեստերանների հետ: Վեստերանները հաղթեցին 2:1 հաշվով:

ՍՍՀՄ Օլեմպիական թիմի հետ խաղերը կազմակերպել են ԼՂԻՄ կոմերիտմիության առաջին քարտուղար Մարատ Մուսայելյանը: Խաղից հետո Օլիմպիական թիմի մարզիչ Սերգեյ Սալնիկովն ասաց. «Ես զարմանում եմ, որ Ղարաբաղի վեստերանների թիմն ավելի ուժեղ է խաղում, քան հիմնական կազմը»:

Ղարաբաղի վեստերանների թիմը մի քանի անգամ մասնակցել է տարբեր քաղաքների ֆուտբոլային մրցաշարերին և միշտ գրավել առաջնային տեղեր: «Ղարաբաղ» ֆուտբոլային ակումբի վեստերանների թիմը մասնակցել է Հայաստանի առաջնությանը և միշտ գրավել է առաջին կամ երկրորդ տեղերը: Հիշարժան է Անգլիայի «Լիվերպուլ» թիմի վեստերանների հետ հանդիպումը, որը մեր թիմը շահեց 3:2 հաշվով: Երեք գնդակն էլ խփեց Արկադի Հակոբյանը:

Խաղից հետո կազմակերպվել էր ճաշկերույթ՝ ի պատիվ լիվերպուլցիների: Վերջիններս մի քանի րոպե շուտ ներկայացան ճաշկերույթին, և երբ ներս մտան «Ղարաբաղ» թիմի ֆուտբոլիստները, անգլիացիները հոտնկայս ծափահարեցին: Նրանց մարզիչն ու թիմի խաղացողները խոստովանեցին, որ այսպիսի թիմը երիտասարդական տարիներին հաջողությամբ կարող էր մասնակցել Անգլիայի ֆուտբոլային առաջնությանը:



1988թ.: Ջախից նստած են՝ Սարգիս Աղաջանյան, Արթուր Ղահրամանյան, Վլադիմիր Պետրոսյան, Էդուարդ Դանիելյան, Վիգեն Գրիգորյան, Նորայր Մնացականյան: Միջին կանգնածները՝ Լեոնիդ Հովհաննիսյան, Ալեքսեյ Բալայան (թիմի պետ), Գագիկ Հովհաննիսյան, Արմեն Սողոմոնյան, Գագիկ Ծատուրյան (գլխավոր մարզիչ), Վալերի Հայրիյան, Արմեն Միրզախանյան, Վարուժան Բաբայան (թիմի ավագ), Վլադիմիր Հայրիյան (թիմի բժիշկ): Երրորդ շարքի կանգնածները՝ Արկադյա Հակոբյան, Ժան Ապրեալյան, Արմեն Աղամյան, Արտաշես Աղամյան, Արսեն Աղամյան, Սլավա Գաբրիելյան, Գրիգորի Առաքելյան:



1989թ.: Նստած են՝ Արսեն Արզումանյան, Պավել Աղաջանյան, Արմեն Մարտիրոսյան, Սերգեյ Գաբրիելյան, Արմեն Հայրապետյան, Արտուր Ղահրամանյան, Գարիկ Ղարախանյան, Արտեմ Բալասանով: Կանգնած են՝ Վլ. Հայրիյան (բժիշկ), Ռ. Աղապյան (ադմինիստրատորի օգնական), Ա. Ժամհարյան (ադմինիստրատոր), Վ. Բաբայան (թիմի ավագ), Վ. Գրիգորյան, Ա. Աղամյան, Զ. Գրիգորյան, Վ. Հայրիյան, Գ. Համբարձումյան, Ա. Սողոմոնյան, Լ. Հովհաննիսյան (թիմի մարզիչ), Բ. Բաբայան (ավագ մարզիչ):



«Ղարաբաղ» ֆուտբոլային թիմը և «Արարատ» թիմը ընկերական հանդիպման ժամանակ:



«Ղարաբաղ» վետերանների ֆուտբոլային թիմը կապանում «Արարատ» թիմի վետերանների հանդիպման ժամանակ: Ջախից՝ Գրիգորի Առաքելյան, Սեմա Ասրյան, Վալերի Հայրիյան, Կարեն Բաղդուրյան, Կառլեն Սիմոնյան, Արթուր Ապրեալյան, Արկադյա Ղուկասյան, Լեոնիդ Հովհաննիսյան, Բենյամին Բաբայան, Իվան Գրիգորյան, Ռազմիկ Պետրոսյան (թիմի ավագ և մարզիչ):



«Ղարաբաղ» եւ «Կապան» ֆուտբոլի վետերանների հանդիպման ժամանակ:



«Ղարաբաղ» վետերանների ֆուտբոլային թիմը ընկերական հանդիպման ժամանակ, Հայաստանի Գերագույն Խորհրդի պատգամավորների հետ:



«Ղարաբաղ» վետերանների թիմը «Աշտարակ» վետերանների հետ ընկերական հանդիպման ժամանակ:



«Ղարաբաղ» վետերանների թիմը Հայաստանի վետերանների ասոցիացիայի չեմպիոն:

Չախից Գևորգյան, Արկաղյա Հակոբյան, Արկաղյա Սարգսյան, Ռոբերտ Աղաջան, Իվան Գրիգորյան, Արթուր Ապրեսյան, Վազիֆ Իշխանյան: Չախից կանգնած են՝ Բենյամին Բարսյան, Գրիշա Դուլյան, Ռազմիկ Պետրոսյան (մարզիչ), Կաղեմ Սիմոնյան, Կարեն Բաղդյան, Լեոնիդ Հովհաննիսյան, Արկաղյա ժամհարյան:




«Ղարաբաղ-77» ֆուտբոլիստները Կառլեն Սիմոնյանի 50-ամյակին նվիրված երեկոյին:

Ձախից նստած են՝ Ռազմիկ Պետրոսյան, Գագիկ Գալստյան, Կառլեն Սիմոնյան: Ձախից կանգնած են՝ Բենյամին Բարսյան, Սյավիկ Գաբրիելյան, Վագիֆ Իշխանյան, Վալերի Հաչիկյան, Լիլիկ Պետրոսյան, Կարեն Բաղդյան, Լեոնիդ Հովհաննիսյան, Գագիկ Ծատրյան:



Աջից՝ Վլադիմիր Պետրոսյան, Ռենատ Պետրոսյան և Ռենատ Դասաև:



Սերժ Սարգսյանը պարգև է հանձնում Ռազմիկ Պետրոսյանին:

Стадион им. С. Шаумяна

г. Степанакерт

27 июня 1976 г.

Товарищеская встреча

„КАРАБАХ“
Степанакерт

„НЕФТЧИ“
Баку

«Նեֆթչի» թիմը՝
ավագ մարզիչ
Գ. Բ. Բոնդարենկո
դարպասապահներ
Յու. Ռոմենսկի,
Գ. Ախմեդով,
պաշտպաններ
Վ. Օգիրչուկ,
Բ. Կուլամով,
Ա. Օրուչեւ,
Ա. Նուրմամեդով,
Ռ. Կուլիեւ,
Ա. Նամագով,
կիսապաշտպաններ
Տ. Աբբասով,
Ա. Ռախմանով,
Ս. Կուրբանով,
Ա. Ալիեւ,
հարձակվողներ
Ռ. Ալիգադե,
Ա. Բանիշեւսկի,
ս. վ. Ն. Սմոլնիկով,
Է. Աբասով,
Ա. Մամեդով



«Ղարաբաղ» թիմը՝
ավագ մարզիչ
Ռ. Ա. Պետրոսյան
դարպասապահներ
Է. Բաղդասարյան,
Է. Պետրոսյան
պաշտպաններ
Ա. Մուսայելյան,
Մ. Հայրիյան,
Ս. Հայրիյան,
Բ. Բաբայան,
Լ. Հովհաննիսյան
կիսապաշտպաններ
Գ. Հայրապետյան,
Կ. Սիմոնյան,
Ա. Սողոմոնյան
հարձակվողներ
Ա. Ապրեւյան,
Ս. Ռուստամով,
Պ. Առաքելյան,
Յու. Ստեփանյան,
Վ. Աֆիյան,
Վ. Հայրիյան

Начало в 17 часов

Կազմեց՝ Գ. Լ. Արալյան

ФУТБОЛ

СТАДИОН
«УРАЛЕЦ»
1978 г.



СССР
класс „А“
II лига
IV зона

«УРАЛЕЦ»
(Нижний Тагил)
«КАРАБАХ»
(Степанокерт)
21 октября
Начало в 13 час.



706-й МАТЧ КОМАНДЫ «УРАЛЕЦ»
В ЧЕМПИОНАТАХ СТРАНЫ

41-й ЧЕМПИОНАТ

ՍՍՀՄ ֆուտբոլի առաջնային «Ա» խումբ II լիգա IV գոտի, «Ուրալեց»
Նիժնի-Տազիլ-«Ղարաբաղ» Ստեփանակերտ

«Ուրալեց» թիմը՝

թիմի պետ

Վ. Վ. Սաֆրոնով

ավագ մարզիչ

Ա. Ա. Գարեգուկյան

մարզիչ

Վ. Գ. Կոնչին

դարպասապահներ

Գ. Բաբայցև,

Վ. Ստարիկ

պաշտպաններ

Ս. Սմիրնով,

Լ. Կոտաշով,

Ֆ. Զուլխարևեև,

Կ. Ցիգանով,

Վ. Բերեզկին

կիսապաշտպաններ

Վ. Ելշին,

Վ. Արխապչև,

Վ. Նեկրիտով,

Վ. Չերնիշով,

Ի. Մելնիկով

հարձակվողներ

Ե. Իսակով,

Գ. Ամիրպուլո,

Ռ. Կամալով,

Յու. Նիկիտին

«Ղարաբաղ» թիմը՝

թիմի պետ

Ռ. Պետրոսյան

ավագ մարզիչ

Ա. Մ. Տրոֆիմով

դարպասապահներ

Ա. Ալիև,

Վ. Պետրոսյան

պաշտպաններ

Ս. Գաբրիելյան,

Գ. Աթայան,

Ս. Մարտիրոսյան,

Լ. Հովհաննիսյան,

Ն. Ասկերով

կիսապաշտպաններ

Բ. Բաբայան,

Գ. Ծատուրյան,

Կ. Սիմոնյան,

Ժ. Ապրեսյան,

Վ. Բաբայան

հարձակվողներ

Ռ. Հարությունյան,

Հ. Զանազանյան,

Մ. Հովհաննիսյան,

Վ. Հայրիյան,

Ա. Միրզոյան,

Ս. Սիմոնյան

СПОРТИВНЫЙ КОМБИНАТ
«КОЛХОЗЧЫ»


20
августа
1983 года



„КОЛХОЗЧЫ“ — „КАРАБАХ“

(Ашхабад)

(Степанакерт)



«Կոլխոզի» Աշխարհ-«Ղարաբաղ» Ստեփանակերտ

«Կալխոզի» թիմը՝
ավագ մարզիչ

Ա. Նալդեհով

- Վ. Կաֆանով,
- Ռ. Կուրբանմամեդով,
- Ս. Անաշկին,
- Բ. Դուրդիև,
- Օ. Շինկարև,
- Բ. Պուզիկով,
- Ս. Ագաշկով,
- Վ. Պոլուբոյարինով,
- Բ. Նիլազով,
- Ս. Սեիդով,
- Ա. Մենշիկով

«Ղարաբաղ» թիմը՝
ավագ մարզիչ

Ռ. Պետրոսյան

- Վ. Պետրոսյան,
- Գ. Աթայան,
- Ս. Գաբրիելյան,
- Վ. Բաբայան,
- Դ. Սողոմոնյան,
- Ա. Խաչիկյան,
- Բ. Բաբայան,
- Ա. Սողոմոնյան,
- Ա. Խաչիկյան,
- Պ. Եսոյան,
- Վ. Հայրիյան



Չախից՝ Սուրիկ Բաղալյան, Գրիշկա Հակոբյան, Յաշա Ասիլյան



Հայաստանի եւ Ղարաբաղի ֆուտբոլային պատվիրակությունը Ստեփանակերտի համալիրում, 1970թ.



Ջախից՝ Կամո Գետրկով, Ալբերտ Սարգսյան, Իսազմիկ Պետրոսյան, Բենիկ Բարսյան, Միքայել Մկրտըչեն (ավագ մարզիչ), Գարիկ Բալայան, Հրանտ Մելքոնյան, Ինուդիկ Ստեփանյան, Արտեմ Ժամհարյան (նստած)



Ղարաբաղի ֆուտբոլիստները - Սասունապի կամուրջում, 1976թ.
Աջից առաջինը՝ Գորիսի սպորտկոմիտեի նախագահ Վանյանը




ԵՎԵՐԿԱՆ ԴԱՆԳԻԿՅԱՆ
8 Վ 2:2 1960
ՂԱՎԻԱՆԵ - ԱՄԵՓԻԱՆԱԿԵՐՈՒ



Գրոհում է Ռազմիկ Պետրոսյանը



Առաջին պատանեկան թիմը, 1967թ.



«Ղարաբաղ» ֆուտբոլային թիմը, 1969թ.



Զախից՝ Ռազմիկ Պետրոսյան, «Արարատ» թիմի բժիշկ, Յուրի Հարությունյան՝
Նստած են՝ Հովհաննես Արքրահամյան, Ծաղիկյան, Հարություն Բեհյան



«Ղարաբաղ» ֆուտբոլային թիմը Լենինգրադում՝ կրեյսեր «Ավրորա» նավի մոտ



«Կոտայք» Արմվյան ֆուտբոլային թիմը, 1983թ.



Զախից՝ Ստրիկ Բաղալյան, Ռազմիկ Պետրոսյան, Ալբիկ Բաղդասարյան, Լ՛դիկ Սարգսյան, Լյովա Գալստյան



Команда «ЦЕМЕНТ»
Новокузнецк 1975 г.



«Ղարաբաղ» ֆուտբոլային թիմի վերջին հանդիպումը Բաքվում, 1977թ.



1970թ. ֆուտբոլային խաղաշրջանի բացումը Ստեփանակերտում



Զախից՝ Խորեն Հովհաննիսյան, Լիլի Բաղդասարյան, Գագիկ Պետրոսյան, Նորիկ Չիթչյան



«Ղարաբաղ» ֆուտբոլային թիմը՝ Նոր Հաջիում



«Ղարաբաղ» ֆուտբոլային թիմը, 1981թ.

Ահա, թե ինչ են պատմում ֆուտբոլի երկրպագուները Ռազմիկ Պետրոսյանի և «Ղարաբաղ-77» թիմի մասին:



Ա.Ե.ՔՍԱՆԴՐ ՄԻՐԶՈՅԱՆ - 50 տարվա ստաժ ունեցող սպորտի աշխատող

Ռազմիկ Պետրոսյանին ես ճանաչում եմ 50-ական թվականի վերջերից, երբ նա սովորում էր Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում: Նա ֆուտբոլ սկսել է խաղալ Կիրովաբադում եւ տեղափոխվել Ստեփանակերտ, ուսման հետ միաժամանակ սկսել է նաև ֆուտբոլիստի վարպետությունը բարձրացնել:

Տեխնիկումը ավարտելուց հետո ծառայության է անցնում Անդրկովկասի զինված ուժերի Բաքվի կայազորի մարզական ակումբում, միաժամանակ հանդես է գալիս «Վոստոկ» ֆուտբոլային թիմում, որը ղեկավարում էր հանրաճանաչ մարզիչ Արտյոմ Ֆալյանը: Ծառայությունն ավարտելուց հետո, Արտյոմ Ֆալյանը, որը սկզբում տեղափոխվել էր Նովոռոսիյսկ, այնուհետև Երևան, Ռազմիկ Պետրոսյանին հրավիրում է խաղալու իր գլխավորած թիմերում:

Ռ. Պետրոսյանը հանդես է գալիս ԽՍՀՄ-ի առաջնություններում, տարբեր քաղաքների թիմերում: Այդ ժամանակահատվածում կարողանում է նաև ավարտել Երևանի Պետական ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտը:

Վերադառնալով Ստեփանակերտ, աշխատում է ե՛ր որպես ֆուտբոլիստ, ե՛ր որպես մարզիչ: Տարիներ շարունակ խաղալով մարզի հավաքականում, միշտ էլ արդարացրել է մարզասերների սպասելիքները: Երբ տուգանային հարված էր լինում դարպասի մոտակայքում եւ գնդակին էր մոտենում Ռ. Պետրոսյանը, մարզասերները կարծես շունչ չէին քաշում մինչև հարվածելը, որովհետև զգում էին գոլի մոտալուտ լինելը:

Նա մարզադաշտում իսկական առաջատար էր, որը կարողանում էր ամենադժվարին պահին իր վրա վերցնել կազմակերպչի պարտականությունները եւ միշտ էլ արդարացնում էր:

60-ական թվականի վերջերին նրա սաներից շատերը սկսեցին հանդես գալ վարպետ թիմերում, մասնակցելով ԽՍՀՄ-ի առաջնությանը:



Նրա սաներից է. Բաղդասարյանը եւ Գ. Ծատրյանը ընդգրկվել էին ԽՍՀՄ-ի պատանեկան հավաքականում:

Նրա սաներից շատերը ձեռք են բերել հանրապետական եւ մամա-միութենական ճանաչում, որպէս ֆուտբոլիստներ եւ որպէս մարզիչներ: Երբ ես աշխատում էի Ղարմետաքսկոմբինատում, նա «մետաքսագործ» թիմի մարզիչն էր եւ հաջողությամբ մասնակցում էր հանրապետության առաջնությանը եւ գրավում բարձրակարգ տեղեր: 1977 թվականին թիմի բոլոր մասնակիցները, յուրաքանչյուր խաղին բարձր տրամադրությամբ էին մտնում մարզադաշտ: Միայն հաղթանակ՝ այս էր նրանց կարգախոսը: Նրանք հուսախաբ չարին մեր մարզասերներին, այդ դժվար առաջնությունում դարձան չեմպիոն եւ իրավունք ստացան մասնակցելու ԽՍՀՄ առաջնությանը:

Որպէս վետերան մարզիկ, գործընկեր, ինձ վրա մեծ տպավորություն գործեց Ռ. Պետրոսյանը իր ծանրակշիռ վարքագծով: Նա շատ բան է արել մարզած ֆուտբոլի զարգացման համար: Այս անվանի մարզիչին եւ «Ղարաբաղ-77» բոլոր վետերան ֆուտբոլիստներին ցանկանանք երկար տարիների կյանք եւ բեղմնավոր աշխատանք մեր գեղեցիկ լեռնաշխարհում խաղաղության ամրապնդման գործում:



ԲՈՐԻՍ ՂԱՐԱՅԱՆ - 1962-1997թ. ԼՂՀ «Դինամո» մարզական ընկերության փոխնախագահ

«Դինամո» մարզական ընկերությունը հասակակիցն է ԼՂԻՄ ոստիկանության (միլիցիայի ստեղծման, որի հիմնական նպատակը եղել է անձնակազմի ֆիզիկական պատրաստության բարձրացումը, տարբեր մարզաձեւերից բարձրակարգ մարզիկների պատրաստումը):

«Դինամո» ընկերությունում իր ուրույն տեղն է ունեցել ֆուտբոլ մարզաձեւը: Մարզչի հավաքական թիմը հիմնականում համալրվել է դինամոյականներից: Սակայն պետք է նշել, որ այս մարզաձեւի զարգացումը հիմնականում կապված է Ռազմիկ Պետրոսյանի անվան հետ:

Ռ. Պետրոսյանը որպէս ֆուտբոլիստ եւ մարզիչ եղել եւ մնում է բարեխիղճ, պատասխանատու, իր մարզչական պարտականությունները

կատարել է բարձր մասնագիտական մակարդակով, ֆուտբոլիստների մեջ դաստիարակել ընկերասիրություն, կարգապահություն, պատասխանատվություն, սեր դեպի հայրենիքը եւ հաղթանակի հասնելու կամք:

Տարիներ շարունակ նրա պատրաստած սաները մարզում հաղթող են ճանաչվել, Ադրբեջանի հանրապետությունում, գրավել սրցանակային տեղեր:

Իմ հիշողության մեջ միշտ վառ է մնում 1977 թվականը, երբ Ադրբեջանի հանրապետության առաջնությունում «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմը փայլուն հաղթանակ տանելով՝ դարձավ Հանրապետության չեմպիոն: Դա ոչ միայն դինամոյականների, այլ նաեւ մարզի հասարակության համար տոն էր: Այս հաջողությունը համարում եմ մարզիչ Ռազմիկ Պետրոսյանի քրտնաջան աշխատանքի արդյունքը, որովհետեւ նա մարզչական պարապմունքները անց էր կացնում տեխնիկական եւ տակտիկական հնարքների ուսուցմամբ, հսկողության սահմանում ինչպէս թիմի, այնպէս էլ առանձին ֆուտբոլիստների մարզական վարպետության բարձրացման գործում:



ՎԻՏԱԼԻ ՇԱՖԵՐՅԱՆ - ֆուտբոլի մասնագետ

Ռազմիկ Պետրոսյանը 1960-70 թվականների «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմի մեծագույն ֆուտբոլիստներից է, նա իր ամբողջ կյանքը նվիրել է Ղարաբաղում ֆուտբոլի զարգացման գործին: Ռ. Պետրոսյանը ոչ միայն լավ էր իմանում ֆուտբոլի այբուբենը, այլեւ նվիրված էր այդ գործին:

Նրա ղեկավարությամբ 1977թ. «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմը դարձավ Ադրբեջանի չեմպիոն եւ հիմք ստեղծվեց, որպէսզի այդ ֆուտբոլիստները մասնակցեն ԽՍՀՄ ֆուտբոլի առաջնություններում: Ինձ բախտ է վի-

ճակվել աշխատել Ռ. Պետրոսյանի հետ, նա շատ բարեխիղճ, սկզբունքային, ֆուտբոլի բարձր գիտության մասնագետ է:

Իմ մեջ ֆուտբոլը, կյանքումս մեծ դեր է ունեցել, ես դաստիարակվել եմ, լինել հավատարիմ, ֆիզիկական պատրաստ, հայրենիքին նվիրված մարդ:

ԴԱՋՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ՂԱՐԱԲԱՂԸ»
ՖՈՒՏԲՈՒԼԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Խմբագիր՝ Վարդգես Օվյան
Համակարգչային էջադրումը Անժելա Խաչատրյանի
և կազմի ձևավորումը՝


Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, տառատեսակը՝ Nork New, չափսը՝ 60x84/16, ծավալը՝ 5 տպ. մամուլ, տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «ԴԻՋԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում
Հ. Հակոբյան, 25
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2007



Ռ. Պետրոսյանը սկսեց մարզչական աշխատանքը

1967-2007



«Ղարաբաղը» դարձավ Ադրբեջանի չեմպիոն

1977-2007